

Հայկական Ջորջերը ետ Կը Մղեն Թշնամիի Բորլոր Յարձակումները «Մենք Ձինադադար Չենք Խնդրելու, Պարտադրելու Ենք». Յայտարարեց Արցախի Նախագահ Արայիկ Յարուբիւնեան

Կիրակի, Սեպտեմբեր 27-ի առաւօտեան Ազերի-թրքական զինուած ուժերը լայնածաւալ յարձակում շղթայագերծեցին Արցախի Հանրապետութեան ամբողջ երկայնքով՝ բախուելով Հայկական բանակի ուժեղ դիմադրութեան:

Թշնամին իր գործողութիւնները սկսաւ ուժեղացնելով Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտը ու այլ բնակավայրեր ուր արձանագրուեցան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ:

Պատերազմի առաջին երեք օրերու ընթացքին թշնամիի բոլորը փորձերը՝ զինուորական յաջողութիւններու հասնելու գծով մատուցեցան ձախողութեան եւ Հայոց բանակի զինուորներու մարտունակութեան շնորհիւ Ատրպէյճանի բանակը կրեց ծանր կորուստներ՝ մարդկային եւ զինատեսակներու առումով:

Երեքշաբթի երեկոյեան դրութեամբ, Ատրպէյճանի կորուստները կը գնահատուին՝ 790 մեռել, 72 անօդաչու թռչող սարք, 7 ուղղաթիւ, 137 զրահապատ մեքենայ եւ հրասայլ, 1 օդանաւ:

Հայկական կողմը պատերազմական իրավիճակը թափանցիկ կերպով կը տեղեկացնէ հանրութեան, շատ յաճախ ցուցադրելով տեսանիւթեր՝ բուն կռիւներէն:

Վերջին տուեալներուն համաձայն նահատակուած են մօտ 55 Հայ զինուորներ եւ վիրաւորուած՝ մօտ 200 բանակայիններ:

Պատերազմի առաջին ժամերէն սկսեալ Հայաստանի մէջ հաստատուեցաւ արտակարգ դրութիւն եւ զօրահաւաք: Իսկ տասնեակ հազար երիտասարդներ ու պատերազմի վեթերաններ սկսան արձանագրուիլ որպէս կամաւոր Արցախ մեկնելու եւ Հայրենի հողը պաշտպանելու համար:

«Մենք Ձինադադար Չենք Խնդրելու, Պարտադրելու Ենք»

Ռազմական գործողութիւններու երրորդ օրուայ ընթացքին ուշագրաւ յայտարարութեամբ մը հանդէս եկաւ Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարուբիւնեան: Կամաւորներուն տուած իր այցելութեան ընթացքին ան յայտարարեց, որ «Մենք Ձինադադար Չենք Խնդրելու, Պարտադրելու Ենք»:

«Մենք պիտի պարտադրենք զինադադար: Եթէ մենք զինադադար խնդրենք, դա լինելու է Հայաստանի վախճանը, ոչ թէ Արցախի, որովհետեւ կուտայ մենք ոչ թէ Ատրպէյճանի, այլ Թուրքիայի



Արցախի նախագահն ու Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան նախարարները, բարձրաստիճան զինուորականներուն հետ միասին կ'ուսումնասիրեն ճակատներու վրայ տիրող իրավիճակը

դէմ», ըսաւ նախագահ Յարութիւնեան:

Արայիկ Յարութիւնեան վստահեցուց, որ պէտք է զիտակցինք՝ մեր կեանքէն կախուած է մեր ապագան, մեր սերունդներու ապագան, սերունդներու՝ Արցախի հողին վրայ ապրելու իրաւունքը ու արժանապատուութիւնը:

«Հիւսիսում՝ թալիշներ, յաջողուել ա: Ամենածանր մարտերը կ'ստեղ են ընթանում եւ հարաւային ուղղութեամբ: Ինչքան ուժ ունին, հեն ա նկարները ինտերնե-

տում կայ, երեւի շատերը հասցրել էք նայէք, տանկերով գալիս են, խփում ենք՝ վառվում են, խփում ենք՝ վառվում են: Ո՛չ հաշուում ենք՝ քանի հատ ենք խփել, ո՛չ էլ հաւես ունենք հաշուելու: Խփելու ենք էնքան, մինչեւ ուշքի գան», - կամաւորականներուն ըսած է Արցախի Հանրապետութեան նախագահը:

Իր կարգին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան Երեքշաբթի երեկոյեան

Շար.ը էջ 5

ՍԴՀԿ Զօրակցական Կոչ Կ'ուղղէ՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն

Ձանգուածաբար Մասնակցիլ Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հանգանակութեան Արշալին

Հայկական ու միջազգային հանրային կարծիքը մեծ գարմանքով իմացաւ Ատրպէյճանական բանակի անարգ յարձակումը Արցախի խաղաղ բնակչութեան վրայ: Եղածը ռազմատենչ քաղաքականութեամբ, լայնատարած ու խելագար գործողութիւնը մըն է եւ խախտում միջազգային օրէնքներու:

Ատրպէյճանի նախադրած գործողութիւնները եւ թուրքիոյ մասնակցութիւնը խաղաղ բնակավայրերու ուժեղացումն պետք է խիստ բողոքի արժանանան Միացեալ Նահանգներու կառավարութեան կողմէ:

ՍԴՀԿ բուռն կերպով կը դատապարտէ Ատրպէյճանական Սադրանքները ու վստահ է որ, այդ բոլորը պիտի մատուցին ձախողութեան շնորհիւ Հայկական բանակներու մարտունակութեան եւ անկտրուկ կամքին:

Ս.Գ.Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինն ու մեր բոլոր կառույցները՝ լիովին զօրավիզ կը կանգնին Արցախի ժողովուրդին՝ ազատ ու ապահով ապրելու անոր արդար իրաւունքին:

Կը պահանջենք իսկոյն դադարեցնել պատերազմը եւ առանց նախապայմաններու, շարունակել բանակցութիւնները եւրոպայի մէջ Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) հովանիին ներքեւ:

Այս առթիւ կոչ կ'ուղղենք Ամերիկահայութեան զօրավիզ կանգնելու Հայոց քաջարի բանակին՝ մասնակցելով Հայաստան Համահայկական Հիմնադրամի կազմակերպած հանգանակութեան արշալին:

Ս.Գ.Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին Սեպտեմբերի 28, 2020

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Յայտարարութիւնը

Կիրակի, 27 Սեպտեմբերի առաւօտեան ժամերէն սկսեալ, Ատրպէյճանական բանակը լայնածաւալ ռազմական գործողութիւններ սկսած է ամբողջ Արցախի սահմանի երկարութեամբ:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութիւնը խստագոյն կը դատապարտէ Ատրպէյճանի նախադրած ռազմական յարձակումները Արցախի դէմ: Ակնյայտ է, որ Ալիեւի բռնապետական վարչակարգի այս թշնամական արարքը ամբողջութեամբ ծրագրուած է համադրուած է թուրքիոյ հետ եւ համահունչ է թուրքիոյ նախագահ Րեճեպ Թայիպ Էրտողանի ծաւալապաշտական ծրագիրներուն հետ: Գետեւաբար, այս պատերազմի եւ անոր հետեւանքներուն ամբողջ պատասխանատուութիւնը կը կրեն Ատրպէյճանը եւ թուրքիան:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր ամբողջական եւ անվերապահ զօրակցութիւնը կը յայտնէ Հայաստանի եւ Արցախի գոյգ հանրապետութիւններուն եւ հայոց քաջարի բանակին: Միաժամանակ, իր ամբողջ կարողականութիւնը տրամադրելով հայրենիքի պաշտպանութեան գործին:

Այս պահուն, կոչ կ'ուղղենք միջազգային ընտանիքին եւ Միճակի խումբի անդամ պետութիւններուն, միջոցներ ձեռք առնել, որպէսզի անյապաղ կասեցուն ռազմական գործողութիւնները: Միաժամանակ, կը յորդորենք անոնց զանց ընել հակամարտող կողմերուն ուղղուած զսպուածութեան կոչերը եւ աներկբայօրէն դատապարտել Ատրպէյճանի եւ անոր բացայայտօրէն աջակցող թուրքիոյ գործողութիւնները:

Պահը օրհասական է եւ մենք զմեզ դէմ յանդիման կը կը գտնենք մահ ու կենաց պայքարի՝ թշնամութեամբ ու ատելութեամբ տոգորուած թշնամիին դէմ: Գետեւաբար, մեզմէ կը պահանջուի առաւելագոյն զգօնութիւն, միասնականութիւն եւ համախմբում: Պատմութիւնը բազմիցս ապացուցած է, որ երբ վճռորոշ պահին եղած ենք միասնական, միշտ յաղթական դուրս եկած ենք:

Փա՛ռք Հայ ժողովուրդին, Փա՛ռք Հայոց Բանակին:
 Բիւ՛ր յարգանք զոհուած մարտիկներու յիշատակին:
 Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութիւն Սեպտեմբեր 27, 2020

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Այս Անգամ Կարսը Չի Յանձնուելու

ԿԱՐՊԻՍ ՓԱՇՈՅԵԱՆ

Պատերազմական այս օրերին տեղին կը լինի յիշել Մարդարապատի ճակատամարտը, որը նշանալին իրադարձութիւն է Հայաստանի պատմութեան մէջ: Մարդարապատն ընդամենը վերջին յոյսի ճակատամարտ էր, որը դարձել է փրկիստփայական աշխարհընկալում: Այսինքն՝ վերջին յոյսի ճակատամարտի ընկալումը մեր գիտակցութեան անբաժան մասնիկներու մէջն է: Փորձենք Մարդարապատի տրամաբանութիւնը հակադրել Կարսի յանձնման իրադարձութեանը:

Մարդարապատի ճակատամարտ-Կարսի յանձնում՝ երկու հակադիր իրողութիւններ, որոնք ամբողջութեամբ արտացոլում են Հայ ժողովրդի պատմութեան ընթացքի տրամաբանութիւնը: Հայաստանացիները կարծես թէ թքած ունեն «մանր-մունր» հարցերի վրայ եւ միայն ֆիզիքական ոչնչացման սպառնալիքի առկայութեան դէպքում են արթնանում ծխացող թմբիւրից՝ Մարդարապատում ամրագրելով իրենց ապրելու իրաւունքը, ապահովագրում են եւ վերջում յանձնում Կարսը: Նոյնը կատարում է նաեւ մեր օրերում:

Արցախում մարդիկ կերտեցին իրենց «Մարդարապատը», իսկ դրանից յետոյ օրինաչափօրէն շարժուեցին դէպի «Կարսի» վերատին յանձնմանը: Այո՛, Մարդարապատի ճակատամարտը Հայոց պատմութեան ամենահերոսական էջերից մէկն է, բայց ես առանձապէս ոգեւորուած չեմ դրանով: Չի՛ կարելի ոչինչ չանել եւ միայն վերջնականապէս ոչնչացման սպառնալիքի դէպքում ուշքի գալ եւ անցնել գործի: Բացի այդ, այդպիսի տրամաբանութեամբ Մարդարապատ կարող է լինել միայն մէկ, երկու եւ ծայրայեղ դէպքում երեք ան-

գամ, բայց դա չի կարող լինել շարունակական, քանի որ վերջում որպէս կանոն «Կարսը պէտք է յանձնուի»:

Մարդարապատի տրամաբանութիւնը պէտք է գործի միշտ, իհարկէ՝ ոչ միայն ճակատամարտի տեսքով: Դա իրենից ենթադրում է շատ աւելի լայն սպեկտր՝ տնտեսութեան կառուցումից մինչեւ արդիւնաւէտ կառավարում: Միայն այդ դէպքում չի լինի ֆիզիքական ոչնչացման վտանգ եւ դրանից ելնելով չի լինի նաեւ կեանքի վերջին յոյսի ճակատամարտի անհրաժեշտութիւն, իսկ դրան էլ չի յաջողի Կարսի յանձնումը: Վերջին յոյսի ճակատամարտի խորհուրդը ակտիւօրէն քարոզում է նաեւ այսօր եւ հիմա: Դրա բովանդակութիւնը հետեւեալն է. ոչինչ չանել, պետութիւնը մատնել անտէրութեան, իսկ սարդարապատացիներ տրամաբանութիւն ունեցող պատերազմները կը դան ու կը գնան, եւ հայու ոգին կը դիմագրաւի արտաքին մարտահրաւրներին: Չկայ հայու ոգի, այդպիսի բան գոյութիւն չունի, դա կեղծիք է:

Կը լինի եւս մէկ պատերազմ, երկրորդը, երրորդը, բայց եւ յանկարծ ինչ-որ մի օր կը բախուենք անյաղթահարելի մի խոչընդոտի, չէ՞ որ Մարդարապատի հերոսները հրաժարուեցին կռուել Կարսում, եւ հայոց հնագոյն բերդաքաղաքը գրեթէ առանց կռուի յանձնուեց թուրքերին:

Ես ուզում եմ, որ Հայաստանը յաղթանակած դուրս գայ այս պատերազմից եւ բանակցութիւններում շահեկան դիրքեր զբաղեցնի, բայց այս նպատակի կեանքի կոչման համար անհրաժեշտ է արմատախիլ անել վերջին յոյսի ճակատամարտի պատրանքը եւ ամենօրեայ հետեւողական աշխատանքով մօտեցնել յաղթանակը:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

Ռուսաստանը Քննարկում Է Ռազմուժ Մարտական Պատրաստութեան Բերելու Հարցը

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Այստեղ ես ռազմական մասնագէտ չեմ եւ դրա համար գերծ կը մնամ մեկնաբանութիւնից, յայտարարել է Կրեմլի խօսնակ Պեսկովը՝ ի պատասխան ճեպագրողի ընթացքում նրան ուղղուած հարցի: Իսկ հարցը վերաբերել է այն հանգամանքին, թէ արդեօ՞ք Ռուսաստանը տեսնում է ռեզիոնում իր ռազմուժը մարտական պատրաստութեան բերելու անհրաժեշտութիւն: Այլ կերպ ասած, Կրեմլն առկա է թողնում հարցը, յղում անելով գինուորականներին, ինչը նշանակում է, որ Մոսկուայում հարցն առնուազն ներքին քննարկումները դաշտում է: Սա մի կողմից կարող է խօսել այն մասին, որ Ռուսաստանը դիտարկում է Ատրպէյճանի ռազմական արկածախնդրութեան լարուածութեան եւ մասշտաբի ընդլայնման բաւականին բարձր ռիսկ, ըստ այդմ՝ քննարկում դրան հակադրելու համար արդէն ռուսական ռազմութի ներգրաւման հանգամանքը: Միւս կողմից, սակայն, Պեսկովի այդ յայտարարութիւնը գործնականում ազդակ է հենց այդ հնարաւոր էսկալացիայի անթոյլատրե-

լիութեան մասին, երբ Մոսկուան արձանագրում է, որ չի բացառում Ռուսաստանի անմիջական ներգրաւումը: Այլ կերպ ասած, Մոսկուան ակնարկում է Պաքուին եւ, թերեւս, Անքարային, որ պատրաստ է ընդհուպ այդ տարբերակին, եթէ շարունակուի թուրքական ներգրաւումը թուրքապէյճանական կողմից:

Ակնառու է, որ Թուրքիայի ներգրաւումը թուրքական թիրախը Ռուսաստանն է, առնուազն Հայաստանից ու Արցախից ոչ պակաս: Այդ իմաստով, Մոսկուայի առաջ հարց է՝ կամ տրուել թուրքապատրպէյճանական շանտաժին, կամ խօսել Անքարայի ու Պաքուի հետ ուժեղի դիրքից, սեփական պայմաններով: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որպէսզի Թուրքիան ու Ատրպէյճանը ռազմական սադրանքի հարցում ունենան ակնյայտ ձախողումներ: Այդ խնդիրը հայկական բանակն այժմ լուծում է, իհարկէ, առանց Ռուսաստանի, բայց տուեալ պարագայում Ռու-

Դաշնակիցների Ու Միջազգային Հանրութեան Երեսպաշտութիւնը. Պատերազմի Իրաւունքը

Դաշնակից ու գործընկեր պետութիւնների հետ երկխօսութիւնը շարունակուած է, բայց հայկական կողմը խնդրողի դերում չէ, ասել է ՀՀ ԱԳ փոխնախարար Աւետ Ադոնցը:

«Մենք խնդրողի դերում չենք բացարձակ, ասենք, որ մեզ սպանում են, պատերազմ է տեղի ունենում: Մեր դաշնակիցների կողմից գէնքի վաճառքի հարցը այսօրուայ թեմա չէ, մենք այն բարձրացրել ենք շատ վաղուց», ասել է նա:

Աւետ Ադոնցն անդրադարձել է Արցախի դէմ յարձակման կապակցութեամբ միջազգային հանրութեան արձագանքներին ու յայտարարութիւններին: «Միայն Ռուսաստանի յայտարարութիւնը չէր, որ բախնասաւորուած էր: Ես նաեւ կը յիշատակէի քաղաքակիրթ աշխարհը ներկայացնող պետութիւններին, այս պահի դրութեամբ իրենց բոլոր յայտարարութիւնների կեդրոնական կէտն իրավիճակը հանգստացնելն է: Պատերազմ է, անկանխատեսելի փուլերով է զարգանում: Պարզ պատերազմ չէ, որովհետեւ մեր հակառակորդը այսօր գործում է մի փոքր անսովոր թէ՛ աշխարհագրութիւնը հաշուի առնելով, թէ՛ գործիքները: Այդ իսկ պատճառով ես աւելի քան վստահ եմ, որ այդ յայտարարութիւնների որակը օր-օրի կը փոխուի: Իսկ ինչ վերաբերում է բախնասաւորուած յայտարարութիւններին, իհարկէ դժգոհ ենք, որովհետեւ բոլորս հասկանում ենք, որ պատերազմական իրավիճակում կայ ազրեսոր եւ բոլորս հասկանում ենք, թէ ով է այդ ազրեսորը, եւ ցանկացած բախնասաւորուած յայտարարութիւն նպաստում է լարուածութեան աճին ու զարգացմանը», ասել է Աւետ Ադոնցը:

Ադոնցն իհարկէ մեղմ է ասել, թէ եւ իմաստը լիովին պարզ է՝ բախնասաւորուած մօտեցումները Պաքուին օժտում են «պատերազմի իրաւունքով» եւ այսպէս ասած երաշխիքով: Այլ հարց է, թէ Պաքուն ինչպէս է կարողանում օգտուել իր այդ «իրաւունքից», բայց միջազգային հանրութիւնը տուեալ իրավիճակում լիովին կրում է ազրեսիայի ու վայրենութիւնների պատասխանատուութիւնը:

Այս պարագային պէտք է առանձնացնել Ռուսաստանի դերը, որը համարում է Հայաստանի ռազմավարական դաշնակիցը: Փորձալ առումով իհարկէ նրա «դաշնակցային պարտականութիւնները» չեն տարածում Ղարաբաղի վրայ, միւս կողմից Պաքուն իր քաղաքականութիւնը տարիներ ի վեր կառուցել է հենց Մոսկուայի

հետ պարտաւորեցնող յարաբերութիւնների վրայ, մասնաւորապէս՝ Ատրպէյճանի պարտութիւնը թոյլ չտալու, այսինքն՝ որոշակի երաշխիքների մասով: Մոսկուան դա բացատրել է հաւասար հեռաւորութեան քաղաքականութեամբ, խորքում՝ Ատրպէյճանի վրայ ազդեցութիւնը պահելու ձգտմամբ: Թէ ինչպէս է դա յաջողուել Մոսկուային, երեւում է ներկայիս «թուրքական փակուղուց»՝ Ղարաբաղից մինչեւ Սիրիա եւ Լիպիա:

Կայ պարզ մեխանիզմ իրավիճակը շտկելու ուղղութեամբ, որը միջազգային հանրութիւնը կիրառել է շատ հակամարտութիւնների պարագայում՝ շփման գծում վիճակայի օրակարգի, այսինքն՝ միջազգային մոնիթորինգի համակարգի պարտադրումը եւ Արցախի անկախութեան ճանաչումը: Եթէ միջազգային հանրութիւնը՝ դաշնակից եւ գործընկեր պետութիւնները չեն անում դա, նրանք հաւասար պատասխանատուութիւն են կրում լարուածութեան համար:

Մենք խնդրողի դերում չենք բացարձակ, ասենք, որ մեզ սպանում են, պատերազմ է տեղի ունենում, ասել է ԱԳ փոխնախարարը: Սա կարեւոր ու արժանապատիւ մօտեցում է, որը պէտք է ամրանայ ռազմա-քաղաքական լուրջ բովանդակութեամբ եւ իր հերթին յստակ սահմանի բոլորի պատասխանատուութիւնը:

«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

**Քրեմլին Կոչ Կ'ընէ Երկիրներուն ԼՂ Հարցով Իւղ Չլեցնել Կրակին Վրայ
Լեռնային Ղարաբաղի Հակամարտութիւնը Կրնայ Վերածուիլ Ռուս-Թրքական
Հակամարտութեան, Կարծիք Կը Յայտնեն Ռուսաստանի Փորձագետները**

Քրեմլինի խօսնակ Տիմիթրի Փետրով Սեպտեմբեր 29-ին յայտարարած է, թէ Ռուսաստանը մշտապէս կապի մէջ է Թուրքիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդներուն հետ՝ ղարաբաղեան հակամարտութեան շուրջ: Ռուսաստանը կ'ուզէ, որ ռազմական գործողութիւնները դադրեցուին եւ կը զգուշացնէ, որ կողմերէն որեւէ մէկուն ռազմական օգնութիւն տրամադրելը ալ աւելի կը թէժացնէ լարուածութիւնը:

Վլատիմիր Փուլիինի մամուլի քարտուղարը եւս մէկ անգամ ընդգծած է, որ ղարաբաղեան հակամարտութիւնը ունի միայն քաղաքական կարգաւորում, եւ երկիրներուն կոչ ըրած է իւղ չլեցնել կրակին վրայ առանց շեշտելու, թէ յատկապէս որ երկիրներու մասին է խօսքը:

Նոյն օրը, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար՝ Մեւլութ Չաուշօղլուն յայտարարած է, որ Թուրքիան պատրաստ է աջակցիլ Ատրպէյճանին նաեւ ռազմական դաշտով:

Ուշագրաւ յայտարարութիւններ հնչեցին նաեւ Պետտումայի մէջ: Ռուսաստանը շահագրգռուած է հակամարտութեան շուտափոյթ դադրեցմամբ եւ Ղարաբաղի շուրջ իրադրութեան կարգաւորմամբ, այստեղ որոշիչ դեր պէտք է խաղայ Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրակազմը, յայտարարած է Պետտումայի պատգամաւոր, «Արդար Ռուսաստան» կուսակցութեան ղեկավար՝ Սերկէյ Միրոնովը: Յիշեցնենք, որ աւելի վաղ ԼԴՊՌ կուսակցութեան ղեկավար՝ Վլատիմիր Ժիրինովսքին առա-



Քրեմլինի խօսնակ Տիմիթրի Փետրով

ջարկած էր Լեռնային Ղարաբաղը միացնել Ռուսաստանին:

Պետտուման քննարկած եւ ընդունած է Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վերաբերեալ յայտարարութեան նախագիծ, ուր կոչ ըրած է դադրեցնել ռազմական բախումները, ինչպէս նաեւ առաջարկած է խաղաղ կարգաւորման միջնորդական օգնութիւն: Ռուսաստանի Պետտումայի Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) գործերով Եւրասիական միաձուլման եւ հայրենակիցներու հետ կապերու կոմիտէի պատրաստած յայտարարութեան համաձայն՝ պատգամաւորները լուրջ մտահոգութիւն կը յայտնեն Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոտիի իրադրութեան կտրուկ սրման կապակցութեամբ, որ յանգեցուցած է բազմաթիւ մարդկային զոհերու, եւ վճռակա-

նօրէն կը դատապարտեն կողմերու կողմէ ուժի կիրառումը: Նման չէզոք յայտարարութիւններ արդէն ըրած են Քրեմլինը եւ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւնը:

Ռուսաստանի Անվտանգութեան խորհուրդի փոխնախագահի կարծիքով՝ կողմերը պէտք է հանգստանան, «դադրեցնեն կրքերու բորբոքումը, ձերբազատուին ռազմատենչ հոետորաբանութենէն եւ կանգնեցնեն հակամարտութեան ռազմական բաղադրիչը»:

Նոյն օրը Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ Ատրպէյճանական բանակը կը ռմբակոծէ Հայաստանի Հանրապետութեան տարածքը, մասնաւորապէս Վարդենիսի շրջանը, եւ արդէն կայ գոհ խաղաղ բնակչութեան մէջ: Ռուսական լրատուական գործակալութիւնները այս

տեղեկութիւնը աշխուժօրէն կը տարածեն:

Ռուսաստանի փորձագետները գրեթէ միաձայն կը յայտարարէին, որ եթէ ռազմական գործողութիւնները տարածուին նաեւ Հայաստանի Հանրապետութեան տարածք, Ռուսաստանը՝ որպէս Հայաստանի անվտանգութեան երաշխաւոր եւ ՀԱՊԿ-ի անդամ, ստիպուած պիտի ըլլայ միջամտելու եւ օգնելու հայերուն:

Ռուսաստանի փորձագետները կը համարեն, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը կարող է վերածուիլ ռուս-թրքական հակամարտութեան, քանի որ այսօր Ղարաբաղի մէջ իրենց կարծիքով՝ կ'որոշուի, թէ ով է հիմնական դերակատարը Հարաւային Կովկասի մէջ՝ Ռուսաստանը, թէ Թուրքիան: Ատրպէյճանը այս պատերազմը սկսած է՝ համոզուած ըլլալով, որ հիմնական դերակատարը տարածաշրջանին մէջ այսօր Անգարան է, կը կարծէ ռուսաստանցի քաղաքագետ Արգատի Տուպնովը. «Թուրքիան պարզապէս տարածաշրջանային տերութիւն չէ, Թուրքիան թրքական աշխարհի առաջնորդն է: Թուրքիան փանթութիւն չէր օջակակիր է: Ի հարկէ, Թուրքիան առաջին հերթին կանգնած է պատերազմ սկսելու Պաքուի որոշման ետեւը: Ոչ ոք չի կասկածիր, որ Ատրպէյճանն է պատերազմը սկսած: Եւ սկսած է միայն այն պատճառով, որ լիակատար աջակցութիւն ստացած է Թուրքիայէն», - «Ազատութիւն» ռատիոյի ռուսական ծառայութեան եթերով ըսած է փորձագետը:

Անկախ Գնահատականները Ատրպէյճանի Ռազմական Պատրաստութիւնը Թոյլ Կը Նկատեն. Foreign Policy-ի Անդրադարձը

Ամերիկեան Foreign Policy ամսագրի փոխմբագիր՝ ձեյմս Փալմըրը անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի բախումներուն եւ փորձած պատասխանել քանի մը հարցադրումներու:

Հեղինակը կարճ անդրադարձ կատարած է հակամարտութեան նախապատմութեան եւ նշած, որ սկզբնական նահանջէն յետոյ Հայաստանը իր վերահսկողութեան տակ կը վերցնէ իրավիճակը, որուն կը յաջորդէ 1994 թուականի զինադադարը, որու հետեւանքով հայկական վերահսկողութեան տակ կ'անցնի Լեռնային Ղարաբաղի մեծ մասը:

Հեղինակը նշած է, որ այս 2020 է եւ ամէն ինչ ահաւոր է, բայց այստեղ կան աւելի ճշգրիտ ու յստակ պատճառներ: Ամրան արիւնալի փոխհրաձգութիւններէն յետոյ, ուր իւրաքանչիւր կողմ կը մեղադրէր միւսին զայն սկսելու համար, քաղաքական գործիչները սկսան իրավիճակը իրենց շահերուն ծառայեցնել, յատկապէս ճնշուածութեան եւ տնտեսական անկման պայմաններուն՝ պայմանաւորուած «Քորոնա» ժահրի համավարակով:

Բախումները դեռ նոր սկսած են, բայց դժուար է տեսնել Լեռնային Ղարաբաղը ետ բերելու՝ Ատրպէյճանի կողմէ նախօրօք հռչակուած յաղթանակը: Նախնական փոխհրաձգութիւնները երկու



կողմերուն ալ պատճառած են մարդկային կեանքեր, բայց նաեւ, եթէ հաւատանք Հայաստանի կողմէ հրապարակուած մարտական պատկերուն, Ատրպէյճանական կողմը շատ աւելի նիւթական կորուստներ ունեցած է, քան հայկականը: Հայաստանը կը բռնէ բարձունքները՝ դժուարացնելով Ատրպէյճանական յառաջխաղացումը բարդ լեռնային տարածքին մէջ: Անկախ գնահատականները Ատրպէյճանի ռազմական պատրաստուածութիւնը դեռեւս թոյլ կը համարեն, բանակը քորումփացուած եւ անարդիւնաւէտ է՝ մօտա-

ւոր 20% դասալքութեան մակարդակով: Նախի շահոյթը հնարաւորութիւն տուած է հակայական ներդրումներ կատարելու նոր սարքաւորումներուն 2008-2014 թուականներու ընթացքին: Սակայն դիւներու անկումը առաջացուցած է ֆինանսական խնդիրներ քաղաքական յուզումներու եւ կոշտ ճնշումներու ֆոնին: Բանակն ալ վերապատրաստման կարիք ունի, որպէսզի կարողանայ արդիւնաւէտօրէն օգտագործել ձեռք բերուած զրահամեքենաները: Ատրպէյճանի անսպասելի շարժը կարող է նաեւ յանգեցնել

Մոսկուայի ուղիղ միջամտութեան, ամենայն հաւանականութեամբ ստիպելով կողմերուն անմիջապէս զինադադարի: Եւ Ռուսաստանը, եւ իրանը առաջարկած են բանակցութիւններ վարել ռազմական գործողութիւններու այս նոր փուլը դադրեցնելու համար: Նաեւ անհանգստացնող հաւանականութիւն կայ, որ բախումը կը տարածուի: Թուրքիան, օրինակ, մեծապէս հանդէս եկած է Պաքուի օգտին, Ատրպէյճանցիներու եւ թուրքերու ռժեղ կապի եւ հայերու հանդէպ Անգարայի երկարատեւ թշնամանքի շնորհիւ:

Կրօնական գործօնը այս բախումին մէջ շատ թոյլ է՝ ի տարբերութիւն ազգային գործօնին եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը երբեք չէ դարձած, այնպէս, ինչպէս եղաւ Չեչենիոյ պարագային: Մօտ 2000 նախկին սահմանադիպարներ կուտան եւ Ատրպէյճանի համար, սակայն մեծամասնութեամբ գումարի դիմաց:

Վերջաւորութեան հեղինակը նշած է, որ ամենահաւանական հեռանկարը կ'ըլլայ ցաւալի, համեմատաբար փոքր պատերազմը, որուն կը հետեւի մէկ այլ շրջանուած խաղաղութիւն: Համաձայն մինչ այժմ յայտնի գոհերու ցանկին, շատերը նոյնիսկ ծնած չէին, երբ հակամարտութիւնը առաջին անգամ սկսած է:

ԼՈՒՐԵՐ

Հայաստան Կը Հաստատէ, Իսկ Թուրքիա Կը Հերքէ, Որ Հայաստանի Տարածքէն Ներս Ինքնաթիռ Խոցած Է

Պաշտօնական Անգարան կը հերքէ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տարածած հաղորդագրութիւնը, թէ Թուրքիոյ ռազմաօդային ուժերու F-16 բազմապաշտօն կործանիչի կողմէ Հայաստանի օդային տարածքէն ներս խոցուած է Ձինուած Ուժերու ռազմաօդային ուժերու ՍՈւ-25 գրոհիչը:




Հայաստանի ռազմաօդային ուժերու ՍՈւ-25 գրոհիչը

Թուրքիոյ նախագահականի հանրային կայքերու վարչութեան ղեկավար՝ Ֆահրետ թիւին Ալթինը թրքական Habertürk TV-ին ըսած է, թէ «Թուրքիան Հայաստանի ինքնաթիռ չէ խոցած»: Ատրպէյճանի ՊՆ մամուլի ծառայութեան ղեկավար՝ Վակիֆ Տարկասլին յայտարարած էր, թէ ատրպէյճանական կողմը F-16 տիպի կործանիչներ չունի եւ մարտերուն զանոնք չի կիրառեր:

Յիշեցնենք, որ Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան խօսնակը հաղորդած էր. «Այսօր ժամը 10:30-ից Թուրքիոյ Հանրապետութեան ռազմաօդային ուժերին պատկանող F-16 կործանիչները օդ էին բարձրացել Ատրպէյճանի Հանրապետութեան «Կեանձա» օդանավայանից եւ ապահովում էին Ատրպէյճանի «Տալեար»

օդանավայանից ՀՀ վարդէնիսի տարածաշրջանի վարդէնիս, Մեծ Մասրիք, Սոթք տարածաշրջաններում տեղակայուած ՀՀ բնակավայրերի եւ Ձինուած Ուժերի ցամաքային ստորաբաժանումների ուղղութեամբ Ատրպէյճանի ՍՈՒ-25 եւ թրքական արտադրութեան «Պայրաքթար» ԱԹՄ-ով ռմբահրթիւնային հարուածները: Տուեալ ժամանակահատուածում ՀՀ ՁՈՒ Հակաօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի ստորաբաժանումներին կրակային աջակցման մարտական խնդիրներ էր կատարում իւրային օդապատկանութիւնը: Թուրքիոյ ռազմաօդային ուժերի F-16 բազմապաշտօն կործանիչի կողմից Հայաստանի օդային տարածքում խոցվել է ՁՈւ ռազմաօդային ուժերի ՍՈւ-25 գրոհիչը»: Նաեւ նշած էր, որ օդաչուն զոհուած է:

Նախագահ Սարգսեան. Թուրքիան Շատ Աշխոյժ Դերակատարութիւն Ստանձնած Է Այս Հակամարտութեան Սեջ



Նախագահ Սարգսեան համաժողովի ընթացքին

Հայաստանի նախագահը Սեպտեմբեր 29-ին, մեկնարկած՝ Իտալական Milano Finanza Digital Week հեղինակաւոր համաժողովի ընթացքին յայտարարած է, թէ դարաբաղեան խնդրի կարգաւորումը ոչ բանական ճանապարհէն՝ պատերազմէն անհրաժեշտ է բերել աւելի բանական տարբերակի, որ երկխօսութիւնն է:

Նախագահի աշխատակազմէն փոխանցած են, որ Արմէն Սարգսեան, մասնաւորապէս, ըսած է. «Լեռնային Ղարաբաղի պարագայում կայ երկխօսութեան հարթակ՝ ԵԱՀԿ Մինսքի խումբն իր համախաղաղահանգում, որոնք են՝ Ռուսաստանը, Ֆրանսան եւ Միացեալ Նահանգները: Երկխօսութիւնը մի կողմ դնելը եւ փորձելը ցոյց տալ,

թէ հարցը կարելի է լուծել ուժի միջոցով, որեւէ հեռանկար չունի: Հայերը երբեք չեն յանձնուի: Այս հակամարտութիւնն այսօր տարբերուում է նրանից, ինչ ունէինք նախկինում, տարբերուում է նախորդ միջադէպերից, քանի որ Թուրքիան շատ աշխոյժ դերակատարում է ստանձնել հակամարտութիւնում: Նա ոչ միայն ռազմական զրահամեքենաներ է մատակարարում, այլեւ խորհրդատուներ, վարձկաններ, ելեկտրոնային սարքաւորումներ, ընդհուպ մինչեւ տրոններ եւ հրթիռներ, ու անգամ F-16 կործանիչներ: Սա ապշեցնող է, քանի որ Թուրքիան ՆԱԹՕ-ի անդամ երկիր է, եւ մենք ակնկալում ենք, որ միջազգային հանրութիւնը կը դատապարտի սա»:

Թուրքիան Պատճառ Կը Փնտռէ, Որ Իր Զօրքը Նախիջեւան Մտցնէ. Փաշինեանի Հարցազրոյցը Ռուսիա 1-ին



Վարչապետ Փաշինեան կը պատասխանէ Ռուսաստանեան հեռատեսիլի հարցերուն

Թուրքիան պատճառ կը փնտռէ, որ իր զօրքերը Նախիջեւան տանի: Ռուսիա 1 հեռատեսիլային կայանի «60 րոպէ» հաղորդման ծիրէն ներս նման յայտարարութիւն ըրաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Այս մարտական գործողութիւնները մէջ կարեւոր նրբութիւն կայ՝ Թուրքիան ներգրաւուած է այդ գործընթացում, եւ անգամ կան մասեր, որտեղ մարտական գործողութիւններն է ղեկավարում: Մենք տեղեկութիւններ ունենք, որ Նախիջեւանում արդէն իսկ թրքական բանակի մի քանի ստորաբաժանումներ կան: Բացի այդ, մինչ այդ արդէն իսկ համատեղ զօրավարութիւններ էին անում Թուրքիան եւ Ատրպէյճանը: Այս պատերազմը սկսուեց որպէս այդ զօրավարութիւնների շարունակութիւն», ըսաւ Փաշինեան:

Փաշինեան նշեց նաեւ, որ արդէն իսկ կան լուրեր, որ Թուրքերը Սուրիայէն վարձկաններ կը բերէ,

որոնք Ատրպէյճանի կողմէ մարտական գործողութիւններուն կը մասնակցին: ՀՀ վարչապետը ըսաւ, որ այս մասին կը փաստեն լուրերը, ըստ որոնց՝ արդէն իսկ բախումներ եղած են Ատրպէյճանի բնակիչներուն ու վարձկաններուն միջեւ. վարձկանները կը մտնեն խանութներ ու կը պահանջեն, որ, օրինակ, դադրին ոգելից խմիչք վաճառելէ:

«Ակնյայտ է, որ եւ՛ Հայաստանը, եւ՛ Լեռնային Ղարաբաղի հայերը Թուրքիոյ անմիջական վտանգին տակ են:

Յիշեցնենք՝ Սեպտեմբեր 27-ի վաղ առաւօտեան Ատրպէյճանը լայնածաւալ ռազմական յարձակում սկսած է արցախա-ատրպէյճանական սահմանի ողջ երկայնքով:

Վերջին տեղեկութիւններով՝ հակառակորդի կրակոցներու հետեւանքով զոհուած են 80 զինծառայողներ եւ 3 քաղաքացիական անձեր: Հայկական կողմը շուրջ 200 վիրաւոր ունի:

ՀԱՊԿ-ի Սօս ՀՀ ներկայացուցիչ. Թուրք-ատրպէյճանական Խմբաւորումներու Կուտակուող ՀԱՊԿ Անդամ Պետութեան Սահմանին Չի Կրնար Չանհանգստացնել

Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) Մշտական խորհուրդի նիստին ելոյթով հանդէս եկած է ՀԱՊԿ-ի մօտ Հայաստանի մշտական եւ լիազօր ներկայացուցիչ Վիքթոր Պիեակովը, կը յայտնեն Արտաքին Գործոց Նախարարութենէն:

Վիքթոր Պիեակովը ներկայացուցած է Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ շփման գիծի երկայնքով «սանձազերծուած յարձակումի հետեւանքով ստեղծուած իրադրութիւնը, հրետանու եւ օդուժի կիրառմամբ քաղաքացիական բնակչութեան եւ ենթակառուցուածքների թիրախաւորումը եւ դրան հետեւած սադրիչ գործողութիւնները»:

Ան ուշադրութեան հրաւիրած է «ատրպէյճանական յարձակումի նախապէս ծրագրուած լինելու հանգամանքի եւ փաստերի վրայ՝ միաժամանակ խորը մտահոգութիւն յայտնելով Թուրքիայի կողմից Ատրպէյճանին ցուցաբերուող անվերապահ աջակցութեան առնչութեամբ, ինչը ոչ այլ ինչ է, քան միջազգային իրաւունքի բացարձակ ոտնահարում», կը փոխանցեն ԱԳՆ-էն:

«Հրաժարուելով խաղաղ բանակցութիւններից՝ ատրպէյճանա-

կան ղեկավարութիւնը ընտրել է դարաբաղեան խնդրի լուծման իր ճանապարհը՝ հրահրելով լայնամասշտաբ պատերազմ, որի արդիւնքում արդէն կան բազմաթիւ զոհեր եւ վիրաւորներ, այդ թուում՝ խաղաղ բնակչութեան շրջանում: Առանձնապատուկ անհանգստութիւն է առաջացնում Թուրքիոյ կողմից Ատրպէյճանին ցուցաբերուող անվերապահ ռազմաքաղաքական աջակցութիւնը, որը նպաստում է նաեւ ՀԱՊԿ պատասխանատուութեան գոտում իրավիճակի հետագայ ապակայունացմանը, լուրջ սպառնալիք է ներկայացնում տարածաշրջանի ժողովուրդների համար: Ատրպէյճանի գինուած ուժերի կազմում ծառայում են Թուրք մասնագէտներ, օգտագործուում է թրքական արտադրութեան զրահամեքենաներ՝ այդ թուում ԱԹՄ-եր եւ ռազմական ինքնաթիռներ: Թուրք-ատրպէյճանական խմբաւորումների կուտակումը ՀԱՊԿ անդամ պետութեան սահմանին չի կարող չանհանգստացնել մեզ: Մենք վճռական ենք ամբողջ ուժով դիմադրել եւ չէզոքացնել թուրք-ատրպէյճանական այդ դաշինքի մտադրութիւնները», - նշած է ՀՀ ներկայացուցիչը:

Թուրքիան Սուրիացի Գրոհայիններ Կոլդարկե Ատրպեյճան, Կը Փաստեն Reuters-ը, The Guardian-ը եւ Times-ը



Սուրեացի վարձկան զինեալներ կը ժամանեն Ատրպեյճան

«Այս քայլով Թուրքիան Մոսկուայի հետ մրցակցութեան երրորդ ճակատ կը բանայ՝ Սուրիայէն եւ Լիպիայէն յետոյ», - կը գրէ The Guardian-ը:

Թուրքիան սուրիացի գրոհայիններ կ'ուղարկէ Ատրպեյճան՝ աջակցելու Պաքուին, հայերու դէմ սկսուած բախումներուն, կը հարդորէ Reuters-ը: Այդ մասին հեղինակաւոր գործակալութեան ըսած են իրենք՝ Ատրպեյճան ուղեւորուող զինեալները:

Reuters մասնաւորապէս յաջողած է խօսիլ անոնցմէ երկուքին հետ, որոնք անանուն մնալու պայմանով պնդած են թէ կ'երթան յանուն փողի: «Ես չէի ուզեր, բայց գումարի կարիք ունիմ», - ըսած է վարձկաններէն մէկը, խոստովանելով, որ իրեն խոստացած են ամսական 1500 տոլար, ինչ որ հսկայական գումար է ծայրայեղ աղքատութեան մէջ գտնուող Սուրիային համար: Ատրպեյճան ուղեւորուող գրոհայինը նաեւ պատմած է, թէ յանձնարարութիւնը ստացած է Անգարայի աջակցութիւնը վայելող «Սուրիական ազգային բանակ»էն:

Զինեալները պատմած են, որ իրենց նման շատ-շատեր այդ պայմաններուն համաձայնած են, մէկը ըսած է, թէ ըստ իր տեղեկութիւններուն՝ մօտ 1000 սուրիացի պիտի մեկնին Ատրպեյճան, միւսը ըսած է՝ 700-1000:

Ընդ որում, Reuters անոնց հետ գրուցած է անցեալ շաբաթ, երբ Ղարաբաղի մարտերը դեռ չէին սկսած: Վարձկանները նաեւ մէկ այլ ուշագրաւ տեղեկութիւն յայտնած են, թէ իրենց Ատրպեյճան կ'ուղարկեն մինչեւ սեպտեմբեր 25-ը, այսինքն՝ բուն բախումներու մեկնարկէն երկու օր առաջ:

Ատրպեյճանի նախագահի օգնական Հիքմետ Զաճիբեւ «լիակատար անհեթեթութիւն» որակած է սուրիացի վարձկաններուն ներգրաւելու մասին հարցը: «Մեր գինուած ուժերը պէտք եղածէն աւելի զինուոր ու պահեստագոր ունին», - պնդած է Զաճիբեւը:

Ատրպեյճանը դեռ հագիւ տարածած էր հերքումը, երբ նոյն թեմայով յօդուած հրատարակեց արեւմտեան մէկ այլ հեղինակաւոր լրատուամիջոց՝ բրիտանական The Guardian-ը: Յօդուածի հեղինակը պարբերականի Պոլսոյ թղթակիցն է, որ տեղեկութիւնները ստացած է սուրիացի երեք գրոհայիններէ, որոնք խոստովանած են, որ պայմանագիր ստորագրած են թրքական մասնաւոր ընկերութեան մը հետ՝ Ատրպեյճանի մէջ որպէս սահմանապահ աշխատելու համար:

The Guardian-ը գրուցած է երկու եղբայրներու հետ, որոնք խնդրած են իրենց իրական անունները չհրատարակել, բայց պատմած են, թէ Ատրպեյճան մեկնելու առաջարկը ստացած են Թուրքիոյ աջակցութիւնը վայելող «Սուրիան Մուրատ» ջոկատի հրամանատարէ մը, ընդ որում՝ իրենց շրջապատի զինեալներու հաւաքագրումը սկսած է դեռ մէկ ամիս առաջ: «Մեր առաջնորդը ըսաւ, որ դուք կ'ուղեւորուէք պիտի չմասնակցիք, միայն պիտի աջակցիք պահպանութեան որոշ տարածքներու մէջ», - ըսած է եղբայրներէն մէկը, որուն խօսքով, իրենց ամսական 7-10 հազար թրքական լիրա՝ 700-1000 տոլար աշխատավարձ խոստացած են՝ նաեւ իրեն կազմի ենթակառուցուած քներու պահպանութեան համար:

The Guardian-ը իր հերթին ընդգծած է, որ այդ խոստումները ոչ միշտ կը պահուին. - «Ինչպէս եւ Ատրպեյճանի պարագային, Լիպիա մեկնող սուրիացի զինեալներէն շատերուն եւս սկիզբը ըսուած էր, թէ միայն թիկնապահ պիտի աշխատին, տեղ հասնելուն պէս, սակայն, նրանք յայտնուած էին առաջնագիծին վրայ»:

Պարբերականը գրուցած է նաեւ Թուրքիոյ հովանաւորութիւնը վայելող «Սուրիայի ազգային բանակի» ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ սուրիացի իրաւապաշտպաններուն հետ, երկու աղբիւրներն ալ նշած են, թէ զինեալներու առաջին՝ 500-հոգինոց խումբը արդէն իսկ հասած է Ատրպեյճան, բայց այդ, Պաքու մեկնած են նաեւ երկու բարձրաստիճան հրամանատարներ՝ «Սուրիան Մուրատ» բաժնի առաջնորդ՝ Ֆահիմ էրսանն եւ «Ալ Համդա»-ի առաջնորդ՝ Սայիֆ Ապու Պաքիրը:

«Այս հարցը ունենում իսկութիւնը հաստատել չեն յաջողած», - կը գրէ The Guardian-ը, աւելցնելով՝ լուրերը կ'ամրապնդուին ընկերային համացանցով տարածուած, որոշ չճշդուած տեսանիւթերով, ուր կ'երեւին ինչպէս սուրիացի զինուած գրոհայիններ բեռնատարով կը ճամբորդեն Ատրպեյճանի ճանապարհներով՝ ռազմական երգերով:

Սուրիացի ապստամբներու առաջնորդներէն մէկը՝ Մուսթաֆա Սեճարին, արեւմտեան մամուլի տեղեկութիւնները չէ հաստատած, բայց չէ ալ հերքած: Աւելին, վերջինս բացառապէս փաստած է, որ Թուրքիան յոյսի վերջին նշույլը մնացած է Սուրիոյ նախագահի դէմ պայքարող գրոհայիններուն համար, քանի որ Աստուր երկրի գերակշիռ մասը

Հայկական Զօրքերը Ետ Կը Մղեն Թշնամի

Շարունակուած էջ 1-էն

յայտարարեց. «Այս պատերազմն աւարտուելու է Ատրպեյճանի բա-

րոյցներ տալ միջազգային լրատուամիջոցներուն՝ բացատրելով Հայաստանի դիրքորոշումները, շեշտը դնելով Թուրքիոյ ապակառու-



Ատրպեյճանական Հրասայլ մը Հայկական զօրքերուն կողմէ խոցուել է տը

նակի կամ առնուազն դրա ողջ հարուածային պոտենցիալի լիակատար ոչնչացմամբ, եւ վերականգնուելու համար այդ երկրին մի քանի տասնեակ տարի է հարկաւոր լինելու: Եւ սա քարոզչական ու ոգեւորիչ նշանակութեան գրառում չի»:

Միւս կողմէ կը շարունակուին դիւանագիտական գետնի վրայ աշխատանքները, պատերազմական իրավիճակէն դուրս գալու եւ բանակցային սեղան վերադառնալու ուղղութեամբ:

Աշխարհի բազմաթիւ երկիրներ ու միջազգային կառույցներ այս նպատակով հանդէս կու գան յայտարարութիւններով, ի բացառեալ Թուրքիայէն, որուն ղեկավարները կը շարունակեն խօսիլ ամէն ձեւով Ատրպեյճանի օգնութեան հասնելու պատրաստակամութեան մասին:

Հայաստանի նախագահը, վարչապետը եւ Արտաքին գործոց նախարարը կը շարունակեն հարցազ-

ցողական գործողութիւններուն ու պատերազմ հրահրող քայլերուն վրայ:

Սեպտեմբեր 29-ին, վարչապետ Նիկոլ Փաշինեան պատերազմի սկիզբէն ի վեր երկրորդ անգամ ըլլալով հեռաձայնային խօսակցութիւն ունեցաւ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Թրամփի եւ Պայտընի Յայտարարութիւնները

Միացեալ Նահանգներու նախագահ Տանտլոտ Թրամփ լրագրողներուն յայտնեց թէ, տեղեկացուած է Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ տեսնենք թէ ի՞նչ կրնանք ընել:

Նախագահական Դեմոկրատ թեկնածու՝ Ժօ Պայտըն կոչ ըրաւ Ամերիկեան կառավարութեան, որպէսզի ճնշում բանեցնեն Թուրքիոյ վրայ՝ հեռու մնալու իր միջամտութիւններէն:

արդէն իր վերահսկողութեան տակ առած է, Ռուսաստանի եւ Իրանի աջակցութեամբ:

Աւելի վաղ, հեղինակաւոր մէկ այլ պարբերական՝ բրիտանական Times-ը նոյն թեմայով յօդուած հրատարակած է: Պէյրութի թղթակիցը յաջողած էր գտնել սուրիացի զինուորական մը, որ ինքն ալ նախապէս համաձայնած, յետոյ հրաժարած էր Ատրպեյճան մեկնելու մտադրութենէն:

«Միտքս փոխեցի, քանի որ մենք տարւոյ տարի Սուրիոյ մէջ շիաներու դէմ կը կռուէինք, իսկ հիմա պէտք է աջակցինք հիմնականօրէն շիա Ատրպեյճանին», - ըսած է Times-ի գրուցակից Մոհամադ Մահմուտ ալ-Մոուրանը:

Վերջինս նշած է, որ իր գինակից ընկերներէն շատերը՝ մօտ 150-200-ը, այնուամենայնիւ, համաձայնած են: «Ես որեւէ մէկուն չեմ մեղադրեր, այս տարածքին մէջ մարդիկ սովահար են, եւ շատ երիտասարդներ ու հայրեր յուսահատ կը դիմեն անոր», - ըսած է ան՝ աւելցնելով. - «Կ'ուզեմ, որ Թուրքիան վերջ տայ մեր աղքատութենէն օգտուելուն, եւ կը խնդրեմ, որ Սուրիոյ առաջնորդները հետեւին, թէ ինչ կը կատարուի: Սուրիացի տղամարդիկ կը շահագործուին, մեր ժողովուրդը խաղաղութիւն կը փնտռէ եւ ոչ թէ պատերազմ»:

Times-ի գրուցակիցի խօսքով՝ Ատրպեյճան մեկնած սուրիացի զին-

եալներու հետ որեւէ կապ չկայ, քանի որ անոնց թոյլ չի տրուիր իրենց մօտ պահել բղջային հեռախօսները:

Պաշտօնական Անգարան, հետեւելով Պաքուի օրինակին, կտրականապէս հերքած է այս մասին հարցողները: Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը The Guardian-ին ըսած է. - «Մենք ստրպեյճանական բանակին կ'օգնենք միայն խորհրդատուութեամբ եւ վերապատրաստմամբ: Թուրքիոյ պաշտպանութեան նախարարութիւնը չի զբաղիր զինուորականներու հաւաքագրմամբ կամ տեղափոխմամբ աշխարհի որեւէ անկիւն»:

Reuters-ը, մինչդեռ, կը փաստէ, որ Թուրքիան առաջին անգամը չէ, որ իր նպատակներուն հասնելու համար սուրիացի զինեալներ կը ներգրաւէ: Ամիսներ առաջ Անգարան անոնց Լիպիա գործողութեան, որպէսզի օգնէ տեղւոյն կառավարութեան, ռուսերու աջակցութիւնը վայելող գործարար Հաֆթարի դէմ պայքարին:

«Սուրիացի զինեալները հիմա ալ Ատրպեյճան տեղակայելու ծրագիրը ցոյց կու տայ, թէ որքան մեծ է իր սահմաններէն դուրս ազդեցութիւնը սփռելու Անգարանի ախորժակը», - կը փաստէ The Guardian-ը, միաժամանակ նկատելով. - «Այս քայլով Թուրքիան Մոսկուայի հետ մրցակցութեան երրորդ ճակատը կը բանայ Սուրիայէն եւ Լիպիայէն յետոյ»:

Լիբանանի Ապագան Եւ Լիբանանահայութիւնը

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Երբ կը փորձես քննարկել նուրբ կացութիւն մը, ընդհարում մը կ'առաջանայ զգացումներուդ եւ սառը դատողութեանդ միջեւ: Զգացումներդ կրնան մէկ բան թելադրել, որուն բոլորովին կրնայ հակադրուիլ դատողութիւնդ: Ահա այսպիսի կացութեան մը մէջ ենք, երբ կը քննարկենք Լիբանանի եւ լիբանանահայութեան ապագան: Որքան ալ զեղուն ըլլան մեր զգացումները մեր ծննդավայրին ու մեր հոն ապրած երկու տասնեակ տարիներուն մասին, իրապաշտութիւնը կը ստիպէ մեզի առարկայօրէն քննարկել այս հարցը:

«Մասիս»-ի նախորդ վեց թիւերով վերատպեցինք մօտ 45 տարիներ առաջ Պէյրութի «Արարատ» օրաթերթին մէջ մեր լոյս ընծայած յօդուածաշարքը, «Յեղափոխութեան քննարկումը եւ Լիբանանեան Տաղանայը» խորագրով: Հոն, «Ապագայ Լիբանանը» բաժնին մէջ կը նշէինք մեր կարծիքները, թէ ի՞նչ քաղաքական, տնտեսական եւ ընկերային բարեփոխումներ պէտք է ըլլան, կերտելու համար Նոր Լիբանանը: Հոն կը շեշտէինք, որ այս բարեփոխումներուն «իրագործումը ներկայիս ամէն ժամանակէ աւելի, հրամայական պահանջ մը դարձած է: Ու դարձեալ կը կրկնենք, որ եթէ Լիբանան որդեգրէ անցեալի կարկտանային լուծումներուն նման բան մը, ապա անոր ապագան պիտի մնայ մութ»: Կը շեշտէինք նաեւ, որ «Լիբանանը պէտք է դադրի ըլլալ տարբեր հատուածներու հայրենիքը» եւ «պէտք է աշխատիլ ժողովուրդին մօտ գորացնել լիբանանեան «հայրենիքին» պատկանելիութեան զգացմունքը» («զգացմունքը» բառին տեղ աւելի ճիշտ պիտի ըլլար գրել՝ «գիտակցութիւնը»):

Այսքանը, ինչ կը վերաբերի ներքին ճակատին: Իսկ արտաքին ճակատի պարագային, Լիբանանի եւ Միջին Արեւելքի ապակայունացման գլխաւոր պատասխանատուն կը նկատէինք Իսրայէլի ծաւալապաշտական քաղաքականութիւնը եւ արաբական երկիրներու իրարամերժ եւ անհամերաշխ գործունէութիւնը:

Այժմ շատ ամփոփ կերպով նշենք, որ ի՞նչ գլխաւոր փոփոխութիւններ եղան մեր յօդուածի գրութիւնէն մինչեւ ներկան եւ ի՞նչ կը սպասուի մօտիկ ապագային: Այստեղ անհրաժեշտ կը նկատենք շեշտել յոյժ կարեւոր հանգամանք մը, որուն անտեսումը ի սկզբանէ ձախողութեան կը մատնէ Լիբանանեան տաղանային կամ որեւէ նմանօրինակ տաղանայներու լուծման որեւէ միջոցառում: Այդ այն իրականութիւնն է, որ ժամանակի թաւալին հետ, պետութիւններու եւ աշխարհի տարածքին անխուսափելի փոխակերպումներ տեղի կ'ունենան եւ անոնք որոնք չեն կրնար քայլ պահել այդ փոխակերպումներուն հետ, անպայման կը տուժեն:

Ներքին ճակատ

1943-ին անկախացած Լիբանան պետութեան հիմքը, 1920-ին կազմաւորուած Մեծն Լիբանանն էր, որուն բնակչութեան մօտ 60 տոկոսը քրիստոնէյէ էր, իսկ մօտ 40 տոկոսը՝ իսլամ: Այս տոկոսային համեմատութեան հիման վրայ էր, որ երբ խորհրդարանէն ներս աթոռներու յատկացումը կատարուեցաւ,



ամէն 6 քրիստոնէյի դիմաց 5 իսլամի բանաձեւը որդեգրուեցաւ: Պէտք է նշել, որ Մեծն Լիբանանը կազմուեցաւ, որովհետեւ Լեռնայի-բանանը (որուն մեծամասնութիւնը քրիստոնէաներէ բաղկացած էր, իսկ մնացեալը՝ գլխաւորաբար տիրոջներէ) չէր կրնար ինքնաբաւ գոյութիւն մը ապահովել: Ուստի անոր կցուեցան հիւսիսային Լիբանանը (Թրիփոլի/Աքքար), հարաւային Լիբանանը (Սայտա/Սուր) եւ Արեւելեան Լիբանանը (Պէքաայի հովիտը): 1920-էն մինչեւ 1960-ականները ժողովրդագրական փոփոխութիւններ եղան, բայց հին բանաձեւը մնաց անփոփոխ: 1975-ին ծագած քաղաքացիական պատերազմը, ի միջի այլոց, այս բանաձեւի փոփոխման պահանջի արդիւնքն ալ էր: 1989-ին կնքուած Թայֆի համաձայնութիւնը յատկանշական փոփոխութիւն չբերաւ այս հինցած բանաձեւին, որուն պատճառաւ տուայտանքը շարունակուեցաւ, պարբերական բռնկումներով, որոնց գլխաւորն էր վարչապետ Ռաֆիք Հարիրիի ահաբեկումը 2005-ին: Այսօր, 1920-ի տոկոսային շարաբերութիւնը վստահաբար շրջուած է, եթէ ոչ աւելիով: Ուրեմն ի՞նչպէս կ'ուզէք, որ Լիբանանի ամենամեծ համայնքը դարձած Շիաները խաբուած չզգան, երրորդ կարգի վրայ դասուելով: Երբ երկիր մը 1932-էն ի վեր մարդահամար չէ կազմակերպած, ի՞նչպէս կ'ուզէք, որ այդ երկիրը արդի պետականութեան մը տուեալները ունենայ եւ հոն խաղաղ գոյակցութիւն տիրէ անոր բաղկացուցիչ տարրերուն միջեւ:

Ժողովրդագրական այս խնդիրէն անկախ, կայ նաեւ արեւելումի խնդիրը: Քրիստոնէայ համայնքը կ'ապաւինի Եւրոպայի հովանաւորութեան, իսկ իսլամ համայնքը՝ արաբական աշխարհի (իսկ 1985-էն ի վեր, Շիաները՝ Իրանի): Ասոր համար էր, որ անկախ Լիբանանի առաջին վարչապետ Ռիատ Սոլհ, 1943-ին կնքուած Ազգային Ուխտով կը ցանկար տեսնել իսլամ լիբանանցիներու «լիբանանականացումը», իսկ քրիստոնէայ լիբանանցիներու «արաբականացումը»: Դժբախտաբար այդ ցանկութիւնը անտեսուեցաւ յաջորդ սերունդներու կողմէ, ի հաշիւ իրենց յարանուանական շահերուն, եւ ունեցանք անկայուն Լիբանան մը:

Երբ երկրի մը ժողովուրդը վստահութիւն չունի իր ղեկավարութեան եւ իրեն սպասող ապագային հանդէպ, երբ երկրի մը պետական կառուցցները չեն գործարար օգուտ երկրի ընդհանրական շահերուն, այլ՝ հատուածներուն, բնա-

կան է, որ այդ երկրէն ներս յառաջանան պառակտումներ, վախի եւ ատելութեան փոխադարձ զգացումներ, եղծանում, անօրինակամտութիւն, եւ այլն: Այս բոլորին որպէս արդիւնք կ'ունենանք անկայունութիւն, յուսալքութիւն, արտագաղթ եւ հետեւաբար՝ ձախողած պետութիւն:

Արտաքին ճակատ

Մօտ 45 տարիներ առաջ գրուած մեր յօդուածաշարքին մէջ կը նշէինք, որ Իսրայէլը գլխաւոր պատճառ մըն է լիբանանեան տագնապի հրահրման: «Իսրայէլ փորձեց հրահրել ու զարգացնել ներկայ տաղանայը, որպէս զի այդ յանգի բաժանումի մը, որմէ ետք կարգը պիտի գար Սուրիոյ, Իրաքի եւ այսպէս յաջորդաբար»: Կը մէջբերէինք նաեւ հնդիկ լրագրող Ռ. Ք. Քարանժիտի 1957-ի բացայայտումը, որ Իսրայէլ «կը միտէր խորտակել Արաբական Միութիւնը, սնուցանել կրօնական վէճեր, ու հաստատել կրօնական փոքր պետութիւններ Իսրայէլը շրջապատող հողերուն վրայ»: Այդ փոքր պետութիւններու շարքին կը նշէինք հետեւեալները. Տիրզի (ձէպէլ Տրուզ), Շիա (Լիբանանի հարաւ եւ ձէպէլ Ամել), Մարոնի (Լեռնայիբանան), Ալաուի (Լաթաքիա), Քրտական (Հիւսիսային Իրաք), եւ այլն:

Այդ գրութիւնէն ի վեր ականատես դարձած ենք Իսրայէլ-Եգիպտոս (1979), Իսրայէլ-Յորդանան (1994), Իսրայէլ-Արաբական Միացեալ Էմիրութիւններ (2020) եւ Իսրայէլ-Պահարէյն (2020) համաձայնութեանց, որոնք լայն ճեղքեր յառաջացուցին անուանական Արաբական Միութեան մէջ: Այդ գրութիւնէն ի վեր ականատես դարձած ենք Իրաքի, Սուրիոյ, Լիպիոյ եւ Եմէնի կործանման, Հիւսիսային Իրաքի Քրտական պետութեան հաստատման, Սիւնի-Շիա առճակատումներու, չհաշուած դեռ գալիք հաւանական աղէտները:

ԳՔ - Ընդհանրապէս Պարոն Տատուրեան եւ յաջողութիւն ձեր առաքելութեան մէջ:

ՆՏ - Շնորհակալութիւն ձեզի, այս առիթին համար:

Ստորեւ, անկեղծ տպաւորութիւններ՝ աշակերտներուն կողմէ:

Պ. Հայկական նոր ճեմարանը շատ սիրեցի: Ամէն օր հայերէն դաս կայ: Մենք հարուստ բանաստեղ-



նակատարութիւն մը՝ օրինակ Հայաստանի անկախութիւնը, Վարդանանցը, Թարգմանչաց տօնը եւ անշուշտ Ապրիլ 24-ը, երբ մեր աշակերտները պիտի երթան Փաստինայի Ապրիլեան յուշակոթողի վայրը եւ մոմավառութեամբ յիշեն Յեղապանութիւնն ու մեր անմեղ նահատակները:

Մենք նաեւ կը ծրագրենք Մայիսին երթալ Հայաստան՝ եթէ պսակաձեւ համաճարակի արգելքը վերնայ, որուն կ'ուզէ մասնակցիլ նաեւ մեր Տնօրէնը: Այս ձեւով, ան պիտի ծանօթանայ մեր ժողովուրդի մշակոյթին, կենցաղին եւ սովորութիւններուն՝ լաւ ճանչնալու իր հայ աշակերտները:

ԳՔ - Վախ կ'այ որ դպրոցը որեւէ պտճառաւ չջարուցակուի գալ տարի:

ՆՏ - Բացարձակապէս ոչ եւ մենք կը նախատեսենք որ աշակերտներուն թիւը աճի եւ բազմանայ: Առ ի տեղեկութիւն՝ դպրոցի Սպանական բաժանմունքը սկսած է

ծուծիւնները կը կարդանք եւ կը վերլուծենք:

Տարօն Եագուպեան, 10րդ դասարան

Մեր վարժարանը շատ բարիքներ ունի: Առաջինը այն է, որ հայերէնի ուսումնասիրութեամբ կը շարունակեմ եւ ուրախ եմ որ նախկին դասընկերներու հետ եմ:

Լուսի Էքիգեան, 10րդ դասարան

Ուրախ եմ որ պետական վարժարանի մէջ կրնամ հայերէն սորվիլ եւ կրնամ հայ ընկերներու հետ ըլլալ:

Սինթիա Վանէսեան, 9րդ դասարան

Մեր վարժարանը լեցուն բարիքներ ունի: Մի քանի հատ են, որ հայկական մշակոյթի մասին կը սովորենք, մեր աւանդոյթների մասին կը սովորենք: Պատրաստուած ենք (յոյսով) նաեւ ճանաչողական պտոյտի համար Հայաստան գնալ: Էլ լին վարդանեան, 9րդ դասարան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 125,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State: ----- Zip Code: -----
 Country: -----
 Tel: ----- Email: -----

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջն Ու Աջապահեան Յայտնի Սերունդը

«Աջապահեան տոհմը առանց բացառութեան իր ամենէն կարող ու փայլուն զաւակներով փայլեցուցած են Սոյո Աթոռը».
ԲԱԲԳԷՆ Ա. ԱԹՈՒԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ



ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ԱԲ. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Աւանդութեամբ առ Սեգ Հասեալ

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը Հայ Եկեղեցւոյ մէջ նուիրական նշխար մը կը նկատուի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ առնչուած եւ սակայն անոր ծագումին ու գոյութեան մասին պատմիչները անորոշ ակնարկութիւններ միայն ըրած են, եւ սակայն Մեծ Սուրբին վախճանման 325 թուականն ու թաղուած տեղը նշելով: Ուրեմն Աջի հնագոյն աւանդութիւնները հասած են Հայ Եկեղեցւոյ Աթոռներուն հետ միասին, եւ մինչեւ Կիլիկեան Թագաւորութեան սկիզբը Ս. Փրկչի Խաչին հետ միասին եւ անկէ ետք որպէս երկրորդական, Աջը գործածուած է հանդիսութեանց ընթացքին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ժամանակաւոր վայրին մէջ մինչեւ Կիլիկեան Թագաւորութեան 1375-ի անկումը:

Այսօր մէկէ աւելի Լուսավորչի Աջեր ցոյց կը տրուին սխալ մեկնաբանութեան մը հետեւանքով, եւ այդ պատճառով է որ հնարուած են այլ Աջեր եւ իսկական իմաստն ու արժէքը իրարմէ հեռացուցած: Ըստ այդ մեկնաբանութեան իբր թէ «ո՛վ որ տէրն է Ս. Աջին, ա՛ն է Հայոց Կաթողիկոսը»՝ հետեւելով շատ ուշ շրջանի 17-րդ դարու Առաքել Դաւրիթեցի պատմիչին յայտարարութեան թէ «ի վերայ Աջոյն եւ էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կան»:

Զափազանցուած կարծիք մըն է նաեւ այն թէ Հայոց Կաթողիկոսներու օծման աւելիքներով անհրաժեշտ եղած է միշտ Աջին ներկայութիւնը՝ օծումը վաւերական դարձնելու համար: Կիլիկիոյ մէջ շարք մը Կաթողիկոսներ առանց Սուրբ Աջի ներկայութեան օծուած են երբ Աջը ժամանակաւոր կերպով Աղթամարի Կաթողիկոսութեան ձեռքն անցած էր: Հետեւաբար Աջը կանոնական անհրաժեշտութիւն մը չէ եղած Կաթողիկոսական իշխանութեան լրումին կամ վաւերականութեան համար:

Յատկապէս երբ Կաթողիկոսական Աթոռը գրեթէ հազարամեակ մը Ս էջմիածնէն դուրս մնաց եւ 1441 թուականին վաղարշապատ վերադարձաւ, անշուշտ Աջին պատմութիւնը խնդրոյ առարկայ եղաւ: Կա՛մ Աջը մնաց Սիս եւ էջմիածնի մէջ երկրորդ Աջ մը երեւան ելաւ, եւ կամ ինչպէս ձեռագիրներու

յիշատակարաններ կը գրեն, Աջը «գողցուեցաւ» եւ տարուեցաւ էջմիածին: Ինչպէս միշտ նաեւ մինչեւ այսօր Կիլիկեան Աթոռը ունի իր Աջը եւ Մայր Աթոռն ալ իր Աջը: Երբ մտածելու ըլլանք բարեբախտ իրողութիւն մը չենք նկատեր այս, եւ սակայն էականը Ս Գրիգոր Լուսավորչի օրհնաբեր ներկայութիւնն է երկու պարագաներուն ալ:

Աջապահեան Կաթողիկոսները

Հայ Եկեղեցւոյ պատմութեան մէջ բացառիկ պատուոյ տեղ մը գրուած են Աջապահեան տարբեր Կաթողիկոսները որոնց նախահայրը եղած է Սիսի Տէր Յուսիկ Աջապահեան քահանան իր ութ զաւակներով, որոնցմէ առաջին երեք եղբայրները յաջորդաբար Կիլիկիոյ Կաթողիկոս օծուեցան՝ Աջապահեան Ղուկաս Ա, Միքայէլ Ա, եւ Գաբրիէլ Ա: Տէր Յուսիկ Աջապահեան քահանան իր ութ զաւակներուն մեծ ինամք տարած է կրթութեան եւ դաստիարակութեան համար Սիսի դպրանոցին մէջ 1733 թուականէն մինչեւ 1770: Երեք եղբայր կաթողիկոսներէն ետք կը յաջորդէ Եփրեմ Ա Աջապահեան Կաթողիկոսը 1771-1784, որդին Տէր Մարկոս քահանային եւ եղբորորդին երեք կաթողիկոսներուն:

Զիրար կը յաջորդեն Աջապահեան վեց Կաթողիկոսներ եւս՝ Եղիազար, Թէոդորոս, Կիրակոս Ա, Եփրեմ Բ, Միքայէլ Բ, եւ Կիրակոս Բ, որ Սիսի մէջ եպիսկոպոս ձեռնադրած է Ներսէս Պատրիարք Վարժապետեանը:

Նուիրեալ Աջապահ Սերունդը

Աջապահեան Կաթողիկոսներու տոհմը, սկսեալ իրենց հօրմէն՝ Տէր Յուսիկ Աջապահեան քահանայէն մինչեւ 1730 իրենց տան մէջ պահած են Ս Գրիգոր Լուսավորչի Աջը՝ ուղղակի իրենց հսկողութեան տակ: Յուսիկ քահանայ Աջապահեան վախճանած է 1748 թուին եւ արդարօրէն իր կեանքի պարտքը նկատած է Աջապահներու մենաշնորհ ըլլալը: Զայն արդարացուցին իր երեք Կաթողիկոս որդիները Ղուկաս, Միքայէլ եւ Գաբրիէլ Հայրապետները որոնք հակառակ արտաքին բռնութեանց պահպանեղան Ս. Աջին իրենց կեանքի գինով: Աջապահեաններու համբաւը տկարացուց դժբախտաբար իրենց յաջորդը՝ Մարաշի Մկրտիչ Քէյֆսիզեան Կաթողիկոսը 1871 թուականէն սկսեալ:

iOS Համակարգի Առաջին Հայերէն Ուղղագրիչը Թողարկուած է...

**ԺԱՄԸ ՀԱՍԱԴ...
ԳՍԼՈՒՄՍ ԿԻԼԴԵԼԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ**
կը ներկայացնէ iOS համակարգի առաջին հայերէն ուղղագրիչ-ստեղծաշարը՝

ՆԱՅԻՐԻ-ՍՏԵՂԸ

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքը ուրախութեամբ կը յայտարարէ, որ iOS համակարգի հայերէն ուղղագրիչը արդէն տրամադրելի է եւ անվճար ներբեռնելի App Store-էն: Քանի մը ամիսէն պատրաստ պիտի ըլլայ նաեւ Android համակարգի ուղղագրիչը:
Հայերէն լեզուն կենսունակ պահելու եւ թարմացնելու մեր յարատեւ ջանքերուն պարունակին մէջ, Նայիրիստեղծը՝ iOS-ի ստեղծաշար-ուղղագրիչը - անհրաժեշտ քայլ մըն է: Ան կ'ամրապնդէ հայերէնի տեղը թուային աշխարհին մէջ, ըլլալով ա՛յն գործիքը որ կը դիւրացնէ հայերէնի գործածութիւնը տարբեր հարթակներու վրայ, ընկերային եւ հաղորդակցութեան զանազան ցանցերու մէջ (Facebook, Instagram, Whatsapp եւ Messenger), ինչպէս նաեւ Pages, Notes եւ աւելին: Այս անկիւնադարձային եւ անհրաժեշտ գործիքը ստեղծուած է Nayiri.com-ի կողմէ եւ կառուց-

ուած է HySpell-ի հիմքերուն վրայ: Այս առաջին թողարկումով, Նայիրիստեղծը կը բանի դասական ուղղագրութեամբ, հայերէնի երկու լեզուաճիւղերուն համար՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն: Ուղղագրիչը կը ներառէ աւելի քան 150,000 բառոյթ, որուն շնորհիւ կը ճանչնայ հինգ միլիոն բառաձեւէ աւելի: Առկայ ստեղծաշարը պատրաստուած է արեւմտահայերէնի համար: Յառաջիկայ թողարկումները պիտի ընդգրկեն տարբեր ստեղծաշարեր, ներառեալ իսպանական ուղղագրութեան համար: Հայկական Բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանի խօսքերով՝ «Արհեստագիտութեան եւ լեզուի կապակցութիւնն է որ հայերէնը կենսունակ, գրաւիչ, եւ 21-րդ դարուն առնչելի պիտի պահէ: Վստահ ենք որ ուղղագրիչը պիտի մղէ որ շատ մարդիկ ամէնօրեայ դրութեամբ հայերէն գրեն: Շնորհակալ ենք Nayiri.com-ին այս բարդ գործը ստանձնելու եւ կատարելու համար»:

Ամենավերջին Սիջադէպը

Մեր օրերուն եւս Աջապահեան տոհմի Բարձրաշնորհ Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոս Աջապահեան, Սիսի սերունդին վերջին ներկայացուցիչը, իր ձեռքերով Սրբազան Աջը աքսորի ճամբէն ազատելով Հալէպ եւ ապա Անթիլիաս փոխադրելով, իր առանձնասենեակին մէջ կը պահէր որպէս հարազատ Աջապահ: Իր կեանքի վեջին տարիներուն իր բացակայութեան ապաշնորհ դէպք մը պատահեցաւ մեր օրերուն երբ աջն ու սրբազան արկղը յանկարծ այսպէս տացան Անթիլիասի իր սենեակէն 1956-ի Կաթողիկոսական Ընտրութեանց խառնակ օրերուն, երբ ինք գահիրէ մեկնած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ եպիս-կոպոսական ժողովին մասնակցելու՝ նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթո-

Պիկոս Տ.Տ. Վազգէն Ա. Հայրապետին:

Տողերս գրողը նորընծայ Զաւէն արեղայ Արզումանեան եզպատահապատակ ըլլալով պատկան իշխանութեանց կողմէ յատուկ նամակով Գահիրէ կը մեկնէր զայն Տեղապահ Խաղ Արքեպիսկոպոսին յանձնելու առանց գիտնալու թէ ինչ նամակ էր տարածը: Սրբազանը այլապէս իսկոյն կը վերադառնար Անթիլիաս եւ գուխը կ'անցնէր դժբախտ կացութեան: Բարեբախտաբար ուղիղ տարի մը ետք գողերը կը վերադարձնէին Սրբազան Արկղը երբ արդէն Կիլիկիոյ Նորընտիր Կաթողիկոսը Տ.Տ. Զարեհ Ա օծուած ու գահակալած էր: Ազդու միջամտութեամբ Կաթողիկոսին եւ Խաղ Արքեպիսկոպոսին աւանդները վերադարձան Կաթողիկոսարան:

Լիբանանի Ապագան

Շարունակուած էջ 6-էն

նի մեծահարուստ հայ վաճառականներ բաւական նպաստաւոր համաձայնութիւն մը կնքած էին Բրիտանական East India ընկերութեան հետ, վարելու համար իրենց գործունէութիւնը: Բայց երբ 1772-ին Բրիտանացիք իրենց բացարձակ տիրապետութիւնը հաստատեցին Հնդկաստանի վրայ, հայ վաճառականներու ձեռքէն խլեցին անոնց առանձնաշնորհումները: Ի տես East

India ընկերութեան կոնակին կեցած Բրիտանական հզօր պետութեան, Շահամիրեան յանգած ըլլալով էր հզօր անկախ Հայաստան մը ունենալու անհրաժեշտութեան, որ ի յարկի պարագային օգնութեան պիտի հասնէր ու պաշտպանէր աշխարհացրիւ իր զաւակներուն շահերը:
Թէեւ 250 տարիներ անցած են Շահամիրեանի ժամանակէն, սակայն իր գաղափարները կը մնան այժմէական եւ ուսանելի:

Ծննդեան 200-ամեակի Առիթով Նահապետը՝ Հայր Ղեւոնդ Ալիշան (1820-1901)

Ծանօթ:

Այս տարի Հայաստան եւ Սփիւռք կը նշեն հայ գիրի, գրականութեան եւ հայագիտութեան երախտաւոր Հայր Ղեւոնդ Ալիշանի ծննդեան 200-ամեակը: Հայր Ղեւոնդ Ալիշանի անձնավանդութեան ընդմէջէն սա յարգանքի տուրք մըն է նաեւ բոլոր այն գիտնական Մխիթարեան հայրերուն, որոնք թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Վիեննայի Մայր վանքերուն մէջ իրենց գիտական վիթխարի նուաճումներով անսակարկ ծառայեցին մեր ժողովուրդի բաժրագոյն նպատակներու իրագործումին՝ խոր գիտակցութեամբ եւ նուիրումով: Յ.Մ.

ՅՈՒՍԷՓ ՍԵԼՔՈՆԵԱՆ

Մեր ժողովուրդի բազմադարեան կեանքին մէջ կարեւոր եւ յիշարժան թուականներ եղած են՝ թուականներ, որոնք սիրանք բերած են, բերած են նշանակալից յաջողութիւններ եւ ճախողութիւններ: Եղած են նաեւ աղէտներ: Վերիվայրումներու շարք մըն է դժբախտաբար մեր պատմութիւնը ու յաճախ մարդիկ հարց տուած են թէ՛ ինչպէ՞ս այս փոքրութիւն ժողովուրդը կրցած է դարերու ընթացքին ո՛չ միայն պահել իր ֆիզիքական գոյութիւնը, այլեւ ստեղծագործել, մշակութային կեանք մը զարգացնել եւ իր վաստակը բերել համամարդկային մշակութի, գիտութեան եւ արուեստի զարգացման:

Նախախնամական երեւոյթ է որ Հայ կեանքին եւ պատմութեան մէջ մեր ամէնէն դժուարին, տագնապալի եւ ճակատագրական պահերուն երեւան եկած են դէմքեր, անհատներ, հասարակական ոյժեր որոնք իրենց տեսլականի ոյժով նոր ուղղութիւն պարզեցած են հայ ժողովուրդին երբ մեր շրջապատը եղած է անյոյս, տագնապալի մարտահրաշխանութիւն: Այսպէս, Գրիգոր Լուսաւորիչ Քրիստոնէութեան լոյսը բերաւ Հայաստան եւ փոխեց մեր մշակութային հայեացքի կառուցը եւ խորքը երբ այդպիսի յեղաշրջում մը անհրաժեշտ էր մեր կեանքին ներս: Մեսրոպ Մաշտոց եւ իր աշակերտները Հայ Դպրոցութեան ճամբով նոր կեանք մը պարզեցին մեր ժողովուրդին, ազգային ինքնութեան եւ ինքնաճանաչութեան դրոշմ մը տալով մեր ազգին երբ մեր անմիջական շրջապատին մէջ անձանօթ գողափար մըն էր տակաւին ազգութեան գողափարը: Վարդան Մամիկոնեան եւ իր ընկերները իրենց անձնագոհութեամբ Աւարայրի Դաշտին վրայ մեր գոյութեան ազգային հիմքերը գորացուցին եւ նուիրագործեցին:

Մեր պատմութեան հետագայ դարերուն եղան նաեւ անձինք նուիրեալք, որոնք իրենց աշխատանքով, գործունէութեամբ եւ նուիրումով Հայ կեանքին նոր սկզբնաւորութիւն մը տուին երբ նոյնքան մութ էր ու անյոյս մեր շրջապատը: Անոնք հեռատեսութիւնը եւ գիտակցութիւնը ունեցան անցեալի ջահէն վառելու իրենց լապտերը ու լուսաւորելու եկող սերունդներու ուղին:

Հայր Ղեւոնդ Ալիշանի ծննդեան տարեդարձի տարողութիւնը, բնոյթը եւ կարեւորութիւնը ըմբռնելու համար հարկ է յետադարձ ակնարկ մը նետել ժամանակակից այն պատմութեան վրայ որ կանխեց Ալիշանի գործունէութեան շրջանը եւ պատճառ հանդիսացաւ Ալիշանի եւ անոր նմաններուն երեւան գալու մեր ազգային կեանքին ներս՝ ժրջան կերպով լծուելու աշխատանքի, բացառապատեւութեամբ ժողովուրդի հոգեմտաւորական գանձերը, եւ ծանօթացնելու գանտնք մեր ժողովուրդի լայն խաւերուն, այդ ճամբով անց-

եալը կապելու ներկային եւ անկէ ուղղութիւն տալու գալիք ժամանակներուն: Ալիշան եւ իր նմանները սրբազան առաքելութեամբ եկան մեր ժողովուրդի մօտ բարձրացնելու եւ զարգացնելու անոր ազգային ինքնագիտակցութեան եւ ինքնաճանաչման հորիզոնները, բարելաւելու անոր մշակութային եւ մտաւորական կեանքի պայմանները եւ անոր քաղաքական իրաւունքները եւ երազներուն իրականութեան մարմին մը տալու մտասեւեռումով:

ՊԱՏՄԱԿԱՆ ԽՈՐՔԸ ԵՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ 18 ԵՒ 19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒ ԱՌԱՆՑՔԻՆ

18-րդ եւ 19-րդ դարերուն Հայ ժողովուրդը Արեւելքէն եկած իրար շարժող արշաւանքներու, քաղաքական բախումներու եւ տիրող անիշխանութեան պատճառով կը գտնուէին ընկերային, իմացական եւ ազգային անկումի մը մէջ, ենթարկուելով անգամ մը եւս գիրենք շրջապատող ժողովուրդներու ջլատիչ եւ կաշկանդող ազդեցութեան: «18-րդ դարուն սկիզբը հայ ազգը, եւ ամբողջ Արեւելքը, տակաւին կը գտնուէին տեսակ մը Միջնադարու մէջ» կը գրէ Պատմագետ Հրանդ Պատրմաճեան: Էտուար Տիւրրիէր (Edouard Jean Dulaurier) Revue des Deux Mondes հանդէսին մէջ իր «La societe armenienne contemporaine» յօդուածին մէջ, տպուած 15 Ապրիլ 1854-ին, կը գրէ: «18-րդ դարու սկզբնաւորութեան հայ ազգը գինք հարուածող աղէտներէն ետք, ճնշումներու տակ ստրկացած, արագօրէն կը դիմէր դէպի մտաւորական կատարեալ անկում: Իր լեզուն եւ աւանդութիւնները ամէն օր մաս առ մաս կը կորսուէին, տեղի տալով գինք շրջապատող ժողովուրդներու բարբառներուն եւ բարքերուն»:

Արդարեւ, այս տարածքով պայմաններու հետեւանքով յառաջ եկած էին նաեւ գաղթականական տեղաշարժեր, որոնք նոր սփիւռքներ կը ստեղծէին ըստ բախտի հայրենի աւանդական բնակավայրերէն հեռու, ու կը սպառնային հայ ժողովուրդի գոյատեւման՝ իբրեւ միատարր ամբողջութիւն: Այս պայմաններուն մէջ հայ ազգի ինքնութեան եւ միութեան կապերը տակաւ կը տկարանային, պատճառ դառնալով ձուլումի, այլասեռութեան եւ կորուստի: Առաւել եւս, տարբեր քաղաքական իշխանութեանց եւ դրութիւններու ենթակայ հայ ժողովուրդը Պարսկական եւ Օսմանեան կայսրութեանց սահմաններէն ներս իրարմէ անկապ ազգային զարգացումներ կ'ապրէր առաւել եւս տկարացնելով մէկ ժողովուրդ, մէկ լեզու, եւ մէկ ինքնութիւն հասկացողութիւնը հայ գանգուածներուն մօտ: Այս պայմաններուն մէջ «ամբողջական ստրկութեանն եւ կեանքի անհանդուրժելի պայմաններէն ետք, անբնական երեւոյթ էր մեր իսկաւորամտութիւնը, յետամնաց կեանքը» կը նշէ Միլան Թէօլօլեան իր «Դար մը Գրականութիւն» երկհատոր գործին մէջ:

Այսպէս 15րդ դարէն մինչեւ 19-րդ դար «ո՛չ միայն քաղաքական կեանքի տեսակէտէն, այլեւ Մշակութային կեանքի տեսակէտէն այս շրջանը քայքայումի շրջան մըն է Հայաստանի համար, թէեւ հոս հոն մի քանի կայծեր կ'երեւին հորիզոնին վրայ» կը գրէ Լեւոն Արք. Զէքեան պատմագիր Gerard Dedeyan-ի խմբագրած «Histoire du Peuple Armenien» կոթողային գործին մէջ:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԶԱՐԹՕՆՔԻ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՇՐՋԱՆԻՆ

Մխիթարեան Միաբանութիւնը մեծ եւ հիմնական դեր խաղաց Հայ ժողովուրդի Զարթօնքի եւ վերածնունդի ընթացքի զարգացումին այլ գործօն ազգակներու կողքին 18-րդ եւ 19-րդ դարերուն:

1701-ին հիմնուած փոքր Միաբանութիւն մը Մխիթար Սեբաստացիի ղեկավարութեան տակ ձեռք կ'առնէր զարթօնքը կերտելու եւ կազմակերպելու աշխատանքը: Հայ մատենագիտական վաստակի հրատարակութեամբ, թարգմանութիւններով, հայոց պատմութեան ուսումնասիրութեամբ եւ ծանօթացումով Մխիթարեան հայրերը վենետիկի եւ Վիեննայի մէջ կը ձեռնարկէին արեւմտեան ըմբռնումով, քննական եւ վերլուծողական պրպտումի եւ աշխատանքի: Զոյգ վանքերը կը դառնային հետազոտութեան կենդրոններ, տեսակ մը հայկական համալսարաններ ուր լեզու, պատմութիւնը, գրականութիւնը աննախընթաց ուսումնասիրութեան առարկայ կը դառնային: Թարգմանչական ծաւալուն աշխատանքը որուն լծուեցան Մխիթարեան հայրերը 18-րդ եւ 19-րդ դարերուն, հայ մտաւոր եւ ընկերային կեանքին ընծայեցին արտաքին աշխարհին հետ հարողակցութեան նոր միջոցներ եւ արագացուցին Զարթօնքի աշխարհին զարգացումը:

Մխիթարեան հայրերը իրենց Միաբանութեան հիմնադրութեան առաջին օրէն իսկ հետամուտ եղան հայ արժէքներու, սովորոյթներու, մեր նախնիներու հաւատքին եւ լեզուի պահպանումին: Ու այս աշխատանքը անոնք հետապնդեցին տարեբային ուժեղութեամբ, ամբողջական նուիրումով, գիտակցութեամբ եւ աներեր կամքով՝ Միաբանութեան հիմնադրութեանն մինչեւ օրերս: Անոնց բանասիրական, պատմագիտական, թարգմանչական, հրատարակչական, լեզուական, ծիսագիտական ու կրօնական աշխատանքները խաւարին մէջ տուայտող մեր ժողովուրդին առիթը եւ միջոցը ընծայեցին՝ թօթափելու համար դարերու անշարժութիւնը եւ միանալու արդիական աշխարհի երթին: Մասնագէտներու կարծիքով, Մխիթար Սեբաստացի, Մխիթարեան Միաբանութիւնը եւ Մխիթարեան հայրերը Հայութեան Զարթօնքի հունտերը ցանցեցին 18-րդ դարու ընթացքին եւ այդ Զարթօնքը կերտեցին 19-րդ դարուն:

ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ՝ ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Ահա այսպիսի զարգացումներու ընդմէջէն երեւան կու գայ անձ



մը, Հայր Ղեւոնդ Ալիշան - բանաստեղծ, բանասէր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ: Գրական դէմք մը որ իր կարգին մեծ դեր կը խաղայ Հայ Զարթօնքի ձեւաւորման եւ զարգացումին մէջ:

Հայր Ղեւոնդ Ալիշան ծնած է 6 Յուլիս 1820 թուականին, Պոլսոյ մէջ, հնահաւաք ու դրամագէտ Պետրոս-Մարգար Ալիշանեանի ընտանեկան յարկին տակ մկրտութեան անունով՝ Քերովէ: Պոլսոյ «Չալիխեան» նախակրթարանը հազիւ աւարտած՝ 12 տարեկան Քերովէն դրկուեցաւ Վենետիկի Սուրբ Ղազարի վանքը եւ յանձնուեցաւ Մխիթարեաններու դաստիարակութեան: Վանքի Ընծայարանն ու «Մուրատ Ռափայէլեան» բարձրագոյն վարժարանը աւարտեց 1841ին՝ ու ձեռնադրուեցաւ կուսակրօն քահանայ: Անմիջապէս նուիրուեցաւ նոյն վարժարանէն ներս ուսուցչական ասպարէզին, միաժամանակ աշխատակցելով 1843ին կեանքի կոչուած Վենետիկ Մխիթարեան հայրերու հրատարակած «Բազմավէպ» հանդէսին: Այս շրջանին է որ լոյս տեսան իր առաջին բանաստեղծութիւնները, որոնք գրաբարով գրուած էին եւ կը կրէին Մխիթարեաններու դասական դպրոցին կնիքը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

1858-1861 թուականներուն կը վարէ Փարիզի Սուրբատեան վարժարանի տնօրէնի պաշտօնը: Նոյն թեւքեր 1861 թուականին Ալիշան կը վերադառնայ Ս. Ղազար: Մի քանի տարի ետք, 1866 թուականին, ան կրկին կը նշանակուի Վենետիկի Ռափայէլեան վարժարանի տեսուչ: Այդ պաշտօնը կը շարունակէ վարել մինչեւ 1872 թուականը որմէ ետք ընդմիջտ կը ձգէ մանկավարժական ասպարէզը եւ մինչեւ իր մահը (22 Նոյեմբեր 1901) ամբողջութեամբ կը նուիրուի հայագիտական աշխատանքի:

Իբրեւ մանկավարժ Ղեւոնդ Ալիշան շեշտը դրած է ուսումի կարեւորութեան վրայ: «Եթէ հայ ազգը լաւ յատկութիւններ ունի, ուրիշ ազգերն էլ ունեն: Եթէ այդ ազգեր պակասութիւններ ունեն, հայն էլ ունի: Որովհետեւ ազգը ասուածը պարտէզի է նման, որտեղ հնարաւոր չէ վատ, անօգուտ խոտ չբուսնի: Հարցը սա է, թե ո՞րն է աւելի շատ մոլախոտով լցուած: Յայտնի է, որ աւելի անտէր, անմշակ թողնուած պարտէզը, եթէ նոյնիսկ հողը լաւն է, բայց դարմանող ձեռքեր չունի, կարող է բոլորովին անպիտան խոտերով պատուել եւ ծածկել ու խեղդել օգտակար բոլոր բոյսերը: Շարունակական կրթութիւնն է, որ ազգերին աւելի է ծաղկացնում, քան անխնամ թողն-

Նահապետը՝ Հայր Ղեւոնդ Ալիշան

Շարունակուած էջ 15-էն

ուած բնական ձիրքը» ըսած է ան: Արձակագիր, հրատարակախօս, գրական քննադատ եւ Արեւմտահայ գրող Արփիար Արփիարեան որուն, «Կարմիր ժամուց» եւ «Ոսկի Ապրիլ» գիրքերը նշանակալից ներդրում մը կը հանդիսանան հայ գրականութեան անդաստանէն ներս, այդ տարիներուն աշակերտած է Հայր Ղեւոնդ Ալիշանի եւ հետեւեալ վկայութիւնը կու տայ: «Հրատարակագիր կեանքիս մէջ շատ անգամ առիթ ունեցած եմ խօսելու վենետիկեան յիշատակներու վրայ: Ամէն ատեն, եւ այժմ ալ, երբ ուզած եմ վերլուծել այն զգացումները, որք սիրտս կը կապեն Մխիթարեան Ռափայէլեան վարժարանին, երբ ուզած եմ փնտռել թէ ինչու՞ այնքան խորհին կերպով կը սիրեմ վենետիկն, աչքիս առջեւ ներկայացած է Հ. Ալիշան որ Ռափայէլեան վարժարանի անօրէն էր: Կը յիշեմ զինքը խոհուն, մտածող միշտ խորասուզուած իր մեծ աշխատութիւններուն մէջ, բայց միշտ սրտի տէր, միշտ յիշող թէ այդ տղաքներն յանձնուած են իր խնամքներուն, անոնց միտքը, անոնց սիրտ իսկ պիտի կրթէ եւ ազնուացնէ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Ալիշանը երիտասարդ տարիքին գրական ասպարէզ իջած է որպէս բանաստեղծ ու սկզբնական շրջանին հետեւելով Մխիթարեան աւանդին գրած է գրաբար լեզուով: Ան 1850-ականներու վերջաւորութեան, «Նուագք» ընդհանուր անուան տակ ի մի բերելով երիտասարդ տարիքին գրուած իր քերթուածները, Ալիշան եւ յաջորդաբար լոյս ընծայեց «Մանկունի», «Մաղթունի», «Խոհունի», «Բնունի», «Հայրունի», «Տէրունի» եւ «Տխրունի» խորագրուած գրքովները, որոնք մարդկային անասման բարութեան, մարդկայնապաշտ ապրումներու եւ խոհեւրու, ինչպէս նաեւ քրիստոնէական հաւատքի վերահաստատման նորօրեայ աւետարաններ հանդիսացան հայ ընթերցողին համար: Այս բանաստեղծութիւնները միաժամանակ հայ սրտերուն եւ մտքերուն մէջ հրահրեցին հայոց փառապանծ անցեալի ոգեկոչումը, հայրենի բնութեան պաշտամունքը, հայրենի հողին, քարին ու ջուրին անանց նուիրումի հրամայականը: Այս զգացումները աւելի կը հրահրուէին երբ 19-րդ դարու սկիզբներուն ծայր կ'առնէին ոռութեան քաղաքական եւ ոռութարակական պատերազմները: Այս զարգացումները յոյսեր կը ներշնչէին հայութեան... որ կը մօտենար պարսկական ու թուրքական բռնապետութիւններէն ազատուելու ժամը: Այս կը նշանակէր որ պէտք էր ոտքի հանել հայ ժողովուրդը ի խնդիր ազատութեան: Այս աշխատանքին լծուած էին արդէն ժամանակի յառաջադէմ հայ բանաստեղծներէն հոյ՛ մը, որ մարտի կը հրաւիրէր հայ ժողովուրդի գաւազները՝ թօթափելու օտարի լուծը: Այսպէս Մկրտիչ Պեշիկեան կ'աղաղակէր - «Կ'ուզեմ վառօք եւ գնդակներ... մինչ Միքայէլ Նալբանդեան կը շեշտէր թէ «Ներկա օրերում այլ ինչ սէւ քնար... սուր է հարկաւոր կտրիճի ձեռքին»: Իր կարգին Ռափայէլ Պատկանեան կ'աչպանէր տատամսողը ու խօսքը ուղեկով անոր կ'ըսէր: «Ամօթ է

քեզ... հազար ամօթ... որ զէնք չունիս քո ձեռքին»:

Ալիշան այս շրջանին իրարու ետեւէ կը հրատարակէ մարտակոչային եւ հայրենասիրական բնույթի բանաստեղծութիւններու ամբողջ շարք մը «Ի բամբուռն Հայկազնի»... «Կարմիր վարդան»... «Սեպուհն Վասակ»... «Ի սուրբ Ղեւոնդ»... «Դատաստանք Վասակայ մատնչի»... «Ի նախագահն Մասիս» ... խորագիրներով, որոնք հայ հայրենասիրական բանաստեղծութեան լաւագոյն նմոշները կը հանդիսանան:

Անոնց մէջ Ալիշան հաստատ ու յստակ պատգամ մը կը փոխանցէր հայ ժողովուրդի գաւազներուն: Պաշտելու աստիճան սիրել եւ պահպանել հայոց լեզուն ու հայրենի հողը, հայն ու հայ մշակոյթը: «Լեզուն կորսնցնելէ ետեւ եւ մանաւանդ անոր հանդէպ անհոգ ըլլալէն ետեւ մէկ ալ ազգային սովորութիւնք եւ յիշատակք եւ նշանք շուտով կը կորսուին»:

Անդրադառնալով որ ժողովուրդէն հասկնալի ըլլալու համար գրաբար լեզուն եւ խոսքը կը հանդիսանար իրեն, Ալիշան իր հետագայ գործերը գրեց աշխարհաբարով: Հայր Ղեւոնդ Ալիշան աշխարհաբարի մշակման ու բիւրեղացման պայքարին մէջ մեր

վեր»:

Երկու պատուիկ այդ բանաստեղծութենէն իբրեւ օրինակ: Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել Ահա գեղեցիկ գարուն քո եկել Ո՛վ դու ի վաղուց մոռցուած հայրենիք, Ո՛վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք:

Բայց ափսոս հիմա, որ չար թըշնամիք Իսկի չեն խնայել Հայոց աշխարհիկ, Ձագգն ընչոք ռեղոք քանդել ու գերել, Դէմ չորս հովերուն տրուել ու ցրուել: Ավա՛ղ քեզ, ավա՛ղ, Հայոց աշխարհիկ, Տուն երկնամամ, փրլած տաղուարիկ... Ու այդ բանաստեղծութեան մէջ Ալիշան կը պատգամէր նաեւ: Ձեզ կ'ասեմ մանկուց սիրունք, Գագելիք, Որոց է բնական Հայոց աշխարհիկ, Սի ուրանայք գերկիրդ ու զագգը սիրուն, Ծառն՝ արմատով ծառ, տունն հիմամբն է տուն... Այս բանաստեղծութիւններով Ալիշան Վիպապաշտութեան ուղին բացած է մեր մէջ դառնալով այդ

Կանաչեանի (1885-1967) յօրինողական յղացումով: Բանք, որոտան, բարձուստ բունքիւնք յԱյրարատեան դաշտն ի վայր, Արի արանց արիւնք՝ յեռանդ առատաման ի հրազայր, Հրաւեր հայրենեաց հըռչակի ցոհանուր, Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր. Որք երկնաւորին պսակին էք կաթուտ, Որք երկնաւորին փառաց երկնայորդ: Հապ'օ՛ն արի արանց մանկուց, Հայրենավրեժըդ Հայկազունք, Հապ'օ՛ն ի գէն գունդագունդ Յեռեալ ի պար թունդ ի թունդ, Ի գէն, ի վրեժ, օ՛ն անդր յառաջ, Ի գէն, ի վրեժ, մի՛ ձախ մի՛ յաջ, Օ՛ն անդր յառաջ, Յառա՛ջ, յառա՛ջ, Հապ'օ՛ յառա՛ջ, յառա՛ջ: Առանձին հմայք ունին հայրենի երկրի բնութեան նուիրուած Ալիշանի թախծոտ ու սրտամորմոք երգերը ինչպիսին են «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» եւ «Հայ հայրենիք» բանաստեղծութիւնները: Այս երգերուն մէջ առանձնապէս ուժեղ կերպով արտայայտուած է պանդխտութեան ցաւատանջ զգացումը: Ակնարկելով այս երեւոյթին Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան Ալիշանը կոչած է «Մեր միշտ պանդխտ ալեւոր Նահապետը»:

Մեր դասական գրականութեան մէջ պանդխտութեան նուիրուած լաւագոյն բանաստեղծութիւններէն կը համարուի «Հրազդան»ը, իր անմիջականութեամբ եւ յուզականութեամբ: Հրազդան, գետակդ իմ հայրենի, Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ, Ահա թողել գիողն օտարի, Բաբգէնս հասել եմ պանդխտիկ:

Այլ Հրազդան, ա՛յ ջուրք Հայրենիք, Ա՛յ ափունք, է՞ր կու լայք լըռիկ: Բանաստեղծը, սակայն, լաւատեսօրէն տրամադրուած իր հայրենիքի ասպազի նկատմամբ: Իր «Հայոց Աշխարհիկ» երգը կ'աւարտէ այն հաստատ հաւատքով, որ օր մը պիտի բացուի Հայաստանի գարունը: Ամպն ու փոթորիկ շուտով վերանայ, Նոր արեւ, գարուն, ծառն ու այգի գայ: Արմատք հիմն ցոր ճյուղ, հիմն ճյուղք՝ ցոր ծաղիկ ընծայեն բնութեան, Հայոց աշխարհիկ... Որք խելոք սիրով կան գինչ աղբըրիկք, Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկ... «Լաւ քաղաքացի ըլլալու համար լաւ պետք է ճանաչել հայրենիքը, քննել, ուսումնասիրել անոր անցեալն ու ներկան» կը պատգամէ Ալիշան: «Բնական է մարդուս փնտռել եւ սիրել զհայրենիքը»: «Ո՛ւր է հայրենիքն...», կը հարցնէ եւ ինքն ալ կը պատասխանէ «...Ուր որ հայրենի երգեր կը լսուին՝ հոն հայրենիքը ողջ է»:



դրօշակիրներէն մին եղաւ, ու սեփական ժողովուրդին հասկնալի ու սրտամօտ հայերէնի գործածութեան որդեգրումով սատարեց Զարթօնքի շարժումին եւ անոր գիտակցային տարածումին ժողովրդային լայն խաւերէն ներս: Արդարեւ, աշխարհաբար այս բնույթի առաջին ստեղծագործութիւնը... որ լոյս տեսաւ «Նահապետ» կեղծանունով թէ՛ ըստ ձեւի... թէ՛ ըստ բովանդակութեան նորութիւն էր... երբ հրատարակուեցաւ վենետիկի Մխիթարեան ամսագիր «Բազմավէպ»ի մէջ 1847 Յունիսին «Հայոց աշխարհիկ» խորագրով: Այդ բանաստեղծութիւնը դարձաւ հայ նոր գրականութեան սկզբնաւորութիւնը աւետող գործերէն մէկը: Բանաստեղծութիւնը մեծ յաջողութիւն ունեցաւ ամենուրեք: Հեռաւոր Հնդկաստան ապրող Մեսրոպ Թաղիադեանը դրուատական առաջաբանով արտատպեց զայն իր «Ազգասէր Արարատեան» պարբերականին մէջ: Իսկ Պոլիս գտնուող լեզուաբան եւ գրականագէտ Արսէն Բագրատունի հիացական նամակ գրելով վենետիկ միաբանութեան իր ծանօթ-բարեկամներուն կը խնդրէր որ իմաց տան իրեն թե՛ ո՞վ է «Նահապետ» ծածկանունի տակ երեւցող այդ «նորովի տաղանդը»: Այդ բանաստեղծութիւնը նկատի ունենալով Միքայէլ Նալբանդեան... կը գրէր ... որ «արժանաւոր վարդապետը չափաբերական քերթուածոց մէջ ախոյեան չունի» եւ թէ «նորա գործերը ջերմացուցեր են շատ սրտեր Նահապետի անունին ի

ուղղութեան հիմնադիրներէն մէկը հայ գրականութեան մէջ: Վիպապաշտութիւնը իբրեւ գեղարուեստական, գրական, երաժշտական եւ մտաւորական շարժում սկիզբ առած է 18-րդ դարու վերջին Եւրոպայի մէջ եւ կը յատկանշուի զգացումներու, ինչպէս նաեւ բնութեան եւ անցեալի փառաբանութեամբ: Ալիշան այդ շարժումը ներմուծեց հայ գրականութեան ոգիին մէջ: 1848 թուականին երբ Ալիշան կը նշանակուի վենետիկի Ռափայէլեան վարժարանի տեսուչ կը բռնկի իտալական ազատագրական ապստամբութիւնը Աւստրիական լուծին դէմ: Ան կը լսէ վարժարանի առջեւէն անցնող հազարաւոր իտալացի հայրենասէրներու ազատութեան ոգեշունչ երգերը, եւ ականատէս կ'ըլլայ վենետիկի փողոցներուն մէջ մղուող մարտերուն: Այդ ամէնը երիտասարդ բանաստեղծին վրա կը ձգէ ուժեղ տպաւորութիւն: Ազդուած այդ մթնոլորտէն Ալիշան կը գրէ «Բամբ Որոտան»ը եւ մի քանի այլ մարտաշունչ-հայրենասիրական բանաստեղծութիւններ: «Բամբ Որոտան»ը Ֆրանսական «Մարտէյզ» քայլերգին չափ հրաբորբօք, անոր չափ սրտոտ խանդավառած է հայ ժողովուրդը իր «Ի գէն, ի վրեժ, օ՛ն անդր յառաջ» կոչով, երգահան Բարսեղ

Հ.Բ.Ը.Մ.-ի Կոչը Ատրեպէյճանի Յարձակումը Արցախի Հանրապետութեան Դէմ

Սեպտեմբեր 27ի վաղ առաւօտեան ժամերուն Ատրապէյճան լայնածաւալ յարձակում սանձազերծած է Արցախի Հանրապետութեան դէմ: Ստեփանակերտի եւ այլ քաղաքներու խողաղ բնակիչներ եւ քաղաքացիական կառույցներ նոյնպէս թիրախի տակ առնուած են:



Մեր քաջարի զինուած ուժերը հաստատակամութեամբ պատասխան հարուածներ կը հասցնեն եւ բաւական վնասներ կը պատճառեն տիրահամբաւ հակառակորդին՝ զինք յետ մղելու կործանարար այս պատերազմի ուղիէն:

Այս դժուարին փորձութեան պահուն, իւրաքանչիւր հայ, ուր որ ալ գտնուինք, պէտք է կանգնինք մեր Հայրենիքի կողքին եւ առաջարկենք կարելի որեւէ օժանդակութիւն: Բոլոր կազմակերպութիւնները պէտք է իրենց արդար բաժինը ներդնեն՝ պաշտպանելու համար մեր հողերը, տունները եւ ազգային արժանապատուութիւնը:

Մենք վստահ ենք մեր ռազմական ուժի, ղեկավարներու խոհեմութեան եւ մեր Ազգին յաղթական

ողբին վրայ: Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական վարչական ժողովը իր ամբողջական աջակցութիւնը եւ նեցուկը կը յայտնէ Հայաստանի եւ Արցախի կառավարութիւններուն եւ կոչ կ'ընէ ճիգերը միաւորել ղիմելու միջազգային հանրութեան, որպէսզի առանց վարանումի դատապարտումի արժանանայ Ատրապէյճանի ղեկավարութիւնը:

«Միութիւնը Զօրութիւն է»:

Թուրքիա կը Փորձէ Զրկել Կարօ Փայլանը Պատգամաւորական Անձեռնմխելիութիւնէն



Անգարայի գլխաւոր դատախազը 25 Սեպտեմբերին յայտնած է, որ քրտամէտ «Ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան» 7 պատգամաւորներ անձեռնմխելիութենէն զրկելու գործընթաց սկսած է, այս պատգամաւորները 2014-ին Քոպանի իրադարձութիւններու ժամանակ եղած են ԺԴ կուսակցութեան գործադիր խորհուրդի անդամ: Յանկին մէջ ընդգրկուած են պատգամաւորներ՝ Կարօ Փայլանը, Սարուհան Օլուչը, Մերալ Տանիշ Պէշթաշը, Յուտա Քայան, Սեզաթ Թեմէլլին եւ Սերփիլ Քեմալպաշը:

Կարօ Փայլանի խօսքով՝ եկող շաբաթ Թուրքիայի խորհրդարանը սկսելու է աշխատանքները, եւ այդ ժամանակ կը քննարկուի իրեն անձեռնմխելիութիւնէն զրկելու հարցը: «Ցաւօք սրտի, խորհրդարանը կը վերահսկուի է էրտողանի կողմէ, եւ եթէ ան հրամայած է այդ ընել, ուրեմն մենք կը գրկուինք մեր անձեռնմխելիութիւնէն», - ըսաւ ան:


Պոսլահայ պատգամաւորը նշեց, որ շատերն Թուրքիայի մէջ կը պաշքարին էրտողանի դէմ, անոնք բոլորը միջազգային հանդուրժողականութեան կարիք ունեն: «Ես գիտեմ, որ ամբողջ աշխարհի միլի-

ոնաւոր հայեր կ'աջակցին ինձի: Ի հարկէ, ես ունիմ անոնց օգնութեան կարիքը, եւ մենք իսկապէս միջազգային հանդուրժողականութեան կարիք ունենք՝ էրտողանի ռեժիմի դէմ պայքարելու համար», - ըսաւ ան:

Չանգուածային ձերբակալութիւններուն առաջինը արձագանգած է Արդիւնաբերութեան եւ գիտարուեստի նախարար՝ Մուսթաֆա Վարանքը, որ ըսած է, որ քրտամէտ կուսակցութեան դէմ հակահարձակումները գործողութիւն սկսած է, անոնք, որոնք Քոպանի իրադարձութիւններու ժամանակ եղած են ԺԴ կուսակցութեան գործադիր խորհուրդի անդամ:

Ուրբաթ օր Անգարայի հանրապետական դատախազութիւնը ձերբակալութեան որոշում կայացուցած է ԺԴ կուսակցութեան 82 անդամի նկատմամբ: Ձերբակալուածներու մէջ են նախկին երեսփոխաններ, նահանգային ու շրջանային կառույցներու ղեկավարներ: Անոնց շարքին են Կարսի քաղաքացետ Ահհամ Պիլիկէն, լրագրողներ Հաքան Կիլիսէլիէն, Նազմի Կիլիլին, Ճան Մէմիշ, նախկին երեսփոխաններ Սըրըր Սիւրէյյա Էօստէր Ալթան Թան, Փէրվին Էօստէն եւ ուրիշներ:

Ֆրանսայի Նախագահ Մաքրոնի Մամլոյ Ասուլիսը Լիբանանի Մասին



Անցեալ Կիրակի, Սեպտեմբերի 27ին Ֆրանսայի Հանրապետութեան նախագահ Մանուէլ Մաքրոն յատուկ մամլոյ ասուլիսով մը հանդէս եկաւ Լիբանանի այժմու քաղաքական եւ տնտեսական ճգնաժամի կապակցութեամբ:

Նախագահ Մաքրոն իր հիասթափութիւնը յայտնեց նոր կառավարութիւն մը կազմելու հարցին Լիբանանի քաղաքական տարբեր հոսանքներու միջեւ ստեղծուած սուր տարակարծութեանց իրավիճակին համար: Ան շատ մտահոգիչ նկատեց Հրգպալլահ կուսակցութեան ստեղծած ոչ կառուցողական կեցուածքին: Մաքրոն միեւնոյն ժամանակ սուր քննադատութիւններ ըրաւ Հրգպալլայի բացասական եւ կողմնակալ վերաբերմունքին նկատմամբ:


Եզրակացութիւն՝ «Լիբանանը ազատագրելու» որպէս գործնա-

կան բարեկամեցողութիւն՝ նախագահ Մաքրոն 4-6 շաբթուան նոր ժամկէտ մը սահմանեց, լիբանանցիներուն նոր առիթ մը եւս տալու, որպէսզի միասնական եւ լայնախոհական նոր կառավարութիւն մը կազմուի, որ իր հերթին պէտք է իսկոյն նախաձեռնէ երկրի կենսական բարեկարգութեանց:

Մաքրոնի կողմէ երկարաձգուած ժամկէտը ապարդիւն հռչակուելու պարագային՝ Ֆրանսա իր դրամատուններուն մէջ Լիբանանի պետական անձնաւորութիւններու կողմէ ի պահ դրուած դրամները պիտի սառեցնէ:

Կարգ մը քաղաքական վերլուծաբաններու կարծիքով Լիբանանի ներկայ տագնապը՝ կրնայ լուծուիլ ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւններէն ետք միայն (3 Նոյեմբեր, 2020):

2019-ին, Թրքական Թերթերուն Սէջ Ատելութեան Խօսքի Թիրախ Անէնէն Շատ Հայերը Եղած են



Հրապարակուած են «Հրանդ Տինք» հիմնադրամի հովանաւորութեամբ կատարուած «Ատելութեան խօսքը մամլոյ մէջ» ուսումնասիրութեան արդիւնքները:

Հետազոտութեան ծիրէն ներս քննուած են 2019 թուականի ընթացքին Թուրքիոյ մէջ լոյս տեսած համապետական եւ աւելի քան 500 տեղական թերթեր: Անցեալ տարուայ ընթացքին ազգային, ցեղային եւ կրօնական տարբեր խումբեր թիրախաւորող օրական շուրջ 17, ընդհանուր առմամբ՝ 4364 սիւնակ եւ յօդուած արձանագրուած է: Այդ հրապարակումներուն մէջ 80 տարբեր խումբերու հասցէի 5515 ատելութեան խօսք յատնաբերուած է: Ամէնէն շատ թիրախաւորուած են հայերը՝ 803 հրապարակում: Առա-

ջին եռեակին մէջ են նաեւ սուրիացիները՝ 760, եւ յոյները՝ 754 արձանագրութեամբ: Ատելութեան խօսք ամենաշատը յայտնաբերուած է Yeni Akit, Yenişag Dirilis Postasi թերթերու հրապարակումներուն մէջ:

Ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, որ գրաւոր մամլոյ մէջ ատելութեան խօսքի աճ գրանցուած է ներքին եւ արտաքին քաղաքական շարք մը իրադարձութիւններուն գուզահեռ: Հայերու պարագային այդպիսի խթանիչ իրադարձութիւններէն են, օրինակ, Հայոց ցեղասպանութեան գոհարու չիշատակի օրը եւ ցեղասպանութեան թեմայի շօշափումը Ֆրանսայի եւ ԱՄՆ-ի ղեկավար օղակներուն մէջ:

Ձեր Ծանուցումները Կատահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 Masis2@earthlink.net 626-797-7680

«Ռոմա» - «Եուվենտուս»՝ 2:2 Մխիթարեանը՝ Կոլային Փոխանցման Հեղինակ



Իտալիոյ առաջնութեան երկրորդ շաբթուայ մրցումներուն գծով «Ռոման» իր դաշտին վրայ մրցեցաւ ախոյեան «Եուվենտուսի» հետ: Գրանցուեց ոչ ոքի՝ 2:2 արդիւնք: Մայրաքաղաքային խումբի կազմին մէջ երկու կողի հեղինակ դարձաւ ֆրանսացի կիսապաշտպան Ժորդան Վերետուն: Երկրորդ կողի պարագային արդիւնաւէտ փոխանցումը կատարեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը:

Թուրքիեան խումբէն երկու կող նշանակեց փորձուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն: Հիւրերը 62-րդ րոպէէն սկսեալ 10 ֆուտբոլիստներով շարունակեցին խաղը: Երկրորդ դեղին քարտի համար հեռացուեցաւ ֆրանսացի կիսապաշտպան Ադրիէն Ռաբլոն:

«Եուվենտուսը» 4 միաւորով 5-րդ տեղը կը գրաւէ, «Ռոման» 13-րդն է՝ 1 միաւոր:

Ռոնալտուն Մրցանիշի Հեղինակ Դարձած Է

Թուրքիի «Եուվենտուսի» եւ Փորթուկալի ազգային հաւաքականի առաջատար Կրիշտիանու Ռոնալտուն մրցանիշ հաստատած «Ռոմայի» դէմ խաղի ընթացքին:

35-ամեայ Ռոնալտուն «Ռոմայի» դէմ խաղի ընթացքին դարձաւ երկու կողի հեղինակ: Փորթուկալի յարձակողը նշանակեց 449-րդ եւ 450-րդ կոլերը Եւրոպայի առաջատար 5 առաջնութիւններու ընթացքին:

Նախպէս ուէջ ֆուտպոլիստի չէր յաջողուած դառնալ նման նուաճումի հեղինակ:

Կրիշտիանու Ռոնալտուն 84 կոլ նշանակած է «Մանչեսթեր Եունայթեդի», 311 կոլ՝ «Ռեալի», 55 կոլ՝ «Եուվենտուսի» կազմէն ներս:

«Միլանի» Եւ «Նապոլիի» Յաղթանակները

Իտալիոյ առաջնութեան երկրորդ շաբթուայ մրցումներուն գծով յաղթանակներ տարին «Միլանն» ու «Նապոլին»:

Միլանեան խումբը արտագնայ խաղին մէջ 2:0 հաշուով պարտութեան մատնեց «Կրոտոնէին»:

«Նապոլին» տանը 6 կոլ նշանակեց «Ջենուային» դէմ: «Նապոլին», «Միլանն» ու «Վերոնան» 6-ական միաւորով առաջատարներն են:

Լիոնել Մեսիի Նուաճումը

Գաթալոնական «Պարսելոնայի» արժենթինցի յարձակող Լիոնել Մեսին իւրաքանչեւ նուաճման հասած է Լա Լիգայի մեկնարկային շաբթուայ մրցումներուն՝ «Վիլյաուելայի» դէմ խաղի ընթացքին:

33-ամեայ Մեսին դարձաւ իր խումբի երկրորդ կողի հեղինակը: Արժենթինցի յարձակողը դարձաւ Լա Լիգայի պատմութեան չորրորդ ֆուտպոլիստը, որը կոլ նշանակած է 17-րդ մրցաշրջանին անընդմէջ:

Յիշեցնենք, որ գաթալոնական խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

Երկու կողի հեղինակ դարձաւ Սպանիայի հաւաքականի յարձակող Անսու Ֆատին: Լիոնել Մեսին արդիւնաւէտ կերպով կատարեց 11 մեթրանոցը:

Լուիս Սուարեսը Նորամուտը «Աթլետիկոյի» Հետ Նշեց 2 Կոլով՝ 6:1

Սպանիոյ առաջնութեան ընթացքին յաղթանակով մեկնարկեց Մադրիդի «Աթլետիկոն»: Երրորդ շաբթուայ ընթացքին արժենթինցի Տիէկո Սիմէոնէի գլխաւորած խումբը ընդունեց «Կրանատային» եւ առաւելութեան հասաւ 6:1 հաշուով:

«Պարսելոնայէն» «Աթլետիկո» տեղափոխուած ուրուկուացի յարձակող Լուիս Սուարեսը 70-րդ վայրկեանին փոխարինեց Տիէկո Գոստային եւ աչքի զարկաւ 2 կոլով եւ 1 կոլային փոխանցմամբ:

«Աթլետիկոն» 3 միաւորով 10-րդ տեղն է: «Կրանատան» 3 խաղի ընթացքին վաստակած է 6 միաւոր եւ երկրորդ տեղը կը գրաւէ:



«Բայրն» Պարտուեցաւ «Հոֆենհայմէն»՝ 1:4



Ֆուտպոլի Գերմանիոյ առաջնութեան երկրորդ շաբթուայ ընթացքին ախոյեան Միւնխի «Պայրընը» հիւրընկալուեցաւ «Հոֆենհայմին» եւ պարտութիւն կրեց 1:4 հաշուով:

«Հոֆենհայմը» 2 յաղթանակէն յետոյ հաւասարեցաւ առաջատար «Աուկսպուրկին», որ նոյնպէս ունի 6 միաւոր: «Պայրըն» 3 միաւորով 6-րդն է:

«Լեսթեր Սիթին» Ուժեղ Էր «Մանչեսթեր Սիթին»՝ 5:2



Անգլիայի առաջնութեան երրորդ շաբթուայ մրցումներուն գծով «Մանչեսթեր Սիթին» իր դաշտին վրայ մրցեցաւ «Լեսթեր Սիթիի» հետ: Գաթալոնացի Խոսէպ Գուարդիոլայի գլխաւորած խումբը պարտութիւն կրեց 2:5 հաշուով:

Հիւրերու կազմին մէջ երեք կողի հեղինակ դարձաւ անգլիացի յարձակող Ջեյմի վարդին:

«Լեսթեր Սիթին» 3 յաղթանակէն յետոյ կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

«Մանչեսթեր Սիթին» 2 խաղէն յետոյ 3 միաւորով 13-րդ տեղը կը գրաւէ:

Օբամեյանգը Հաստատած Է, Որ Մերժած Է «Պարսելոնային»

Լոնտոնի «Արսենալի» գաբոնցի յարձակող Պլեր-Էմերիկ Օբամեյանգը հաստատած է, որ ամառային փոխանցումներու պատուհանի ընթացքին հնարաւորութիւն ունեցած է տեղափոխուելու գաթալոնական «Պարսելոնա»:

«Ես մի քանի առաջարկ ստացած եմ «Պարսելոնայէն»: Առաջարկներ եղած են նաեւ այլ խումբերէն, սակայն ես որոշած եմ մնալ «Արսենալի» խումբին մէջ:

Հպարտ եմ, որ նման բարձրակարգ խումբեր հետաքրքրուած են իմ ծառայութիւններով, սակայն ես փափաքիմ մնալ «Արսենալ» խումբին մէջ եւ տիրողոսներ նուաճել այս խումբի հետ»,- Օբամեյանգի խօսքը կը փոխանցէ Goal.com-ը:

Յիշեցնենք, որ Գաբոնի հաւաքականի յարձակողը «Արսենալ» տեղափոխուած է 2018 թուականին Տորթմունտի «Պորուսիայէն»:

